ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200: գինը՝ 100 դրամ

ISSN 1829-3468
18004

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 12 ԱՊՐԻԼԻ 2018Թ.
№ 9 (467)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

...Փոքր ժողովուրդ չենք մենք:

Հովհ. Թումանյան

Նորընտիր նախագահ Արմեն Սարգսյանը ՀՀ Ազգային ժողովի հատուկ նիստում սպանձնել է Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնը

Նորընտիր նախագահ Արմեն Սարգսյանը Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայացած ՀՀ Ազգային ժողովի հատուկ նիստում ստանձնել է Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնը՝ ժողովրդին տրված հետեւյալ երդմամբ. **«Ստանձնելով հանրապետության նախագահի պաշտոնը՝ երդվում եմ. հավատարիմ լինել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, իմ լիազորություններն իրականացնելիս լինել անաչառ, առաջնորդվել միայն համապետական ու համազգային շահերով եւ իմ ողջ ուժը ներդնել ազգային միասնության ամրապնդման գործում»:**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական օրհնանքի խոսքից եւ աղոթքից հետո, նախագահ Արմեն Սարգսյանը հանդես է եկել ելույթով:

president.am
09.04.2018

Պատերազմող երկրի մարզպետներից մեկի տարվա եկամուտը

Սյունիքի մարզպետ՝ առասպելական հարստության տիրոջ համբավ ունեցող Վահե Հակոբյանն անցյալ տարի երկու բնակարան է ձեռք բերել, երեք ավտոտնակ, մեկ հողամաս էլ օտարել է: Ավտոտնակները մարզպետը ձեռք է բերել 3 մլն դրամով, բնակարաններից մեկը՝ 124 մլն 300 հազար, մյուսը՝ 90 մլն 700 հազար դրամով: Հողամասն էլ օտարել է 52 մլն դրամով: Մարզպետն անցյալ տարի ձեռք է բերել նաեւ արժեթուղթ՝ 10 հազար Արաբական Միացյալ Էմիրությունների դիրհամ: Հակոբյանի 2017 թ. վերադարձրած փոխառությունները կազմել են 52 մլն եւ 95 մլն 406 հազար դրամ, հանձնած փոխառությունը՝ 500 հազար ԱՄՆ դոլար: Մարզպետի դրամական միջոցները կազմել են 36 մլն 100 հազար դրամ, որը հարկային տարեվերջում կազմել է 24 մլն 150 հազար դրամ, 193 հազար ԱՄՆ դոլար, որը հարկային տարեվերջում աճել է՝ կազմելով 400 հազար 800 դոլար, եւ 118 հազար եվրո, որը նվազել է տարեվերջում՝ դառնալով 106 հազար 100 եվրո: Հակոբյանը, որպես եկամուտ, հայտարարագրել է 636 հազար 800 ԱՄՆ դոլար շահաբաժին: Մարզպետի կինը՝ էլիզաբեթ Պետրոսյանը, իր ունեցվածքով հետ չի մնում ամուսնուց: Նա անցյալ տարի 50 հազար դրամ բաժնեմաս է ձեռք բերել, նույնքան բաժնեմաս էլ՝ 50 հազար դրամ, օտարել է, իսկ որպես փոխառություն՝ 18 մլն դրամ է վերադարձրել: Մարզպետի կինը պատկառելի աշխատավարձ է ստանում եւ, որպես եկամուտ, հայտարարագրել է երեք տարբեր տեղերից ստացած աշխատավարձը (կամ դրան հավասարեցված վճարումներ): Աշխատավարձի չափը մի դեպքում կազմել է 72 մլն 426 հազար 355 դրամ, 52 մլն 274 հազար 989 դրամ եւ 11 մլն 210 հազար 21 դրամ: Այլ եկամուտ՝ հայտարարագրվել է 51 հազար 241 եւ 50 հազար դրամ:

hraparak.am
Հեղինե ՄԱՆՈՒԿՅԱՆ
4 ապրիլի 2018թ.

Թվանկարչությունը՝ հանրությանը խաբելու ուղիղ ճանապարհ

Շատ անհարմար վիճակում ենք հայտնվել. Սյունիքի մարզին առնչվող պաշտոնական տեղեկությունները, մարզի ու մարզպետարանի վերաբերյալ վարչապետի, նախարարների գնահատականներն իբրեւ սուտ, իբրեւ ոչ հավաստի, իբրեւ շինծու թվեր եւ գնահատականներ են ընկալվում մեզանում: Իսկ երբ մարզպետն է ինչ-որ թվեր հնչեցնում, ապա դա նաեւ անմեղսունակության դրսեւորում է դիտվում…

Բայց երբ այդ ստերի հիման վրա փորձում են փառաբանել մի ամբողջ մարզպետարանի, մարզպետի մեկ տարվա հանդիսավոր անգործությունը, սուտը դառնում է անամոթություն եւ անբարոյականություն, հայրենի պետությանը խաբելու ամբարտավանություն: Եվ այդժամ լռելը դառնում է մեղք գործելու պես մի բան:

Նման ստերից մեկի քննությանն էլ նվիրում ենք սույն հրապարակումը:

Եվ այսպես… Մարտի 29-ին ՀՀ տարածքային կառավարման ու զարգացման նախարար Դավիթ Լոքյանը լրագրողներին ներկայացրեց մարզպետների 2017 թվականի աշխատանքի ցուցանիշներից մեկը եւ նշեց, որ **«հավաքագրման տեսանկյունից հանրապետության առաջատար մարզերն են Կոտայքը, Սյունիքը, Արարատը, Արմավիրը»:**

Կոտայքի, Արարատի, Արմավիրի մասին ոչինչ ասել չենք կարող, քանի որ այդ մարզերի իրավիճակին չենք տիրապետում:

Սյունիքի կացությանը շատ թե քիչ տիրապետում ենք եւ, բնականաբար, կարող ենք անդրադառնալ նախարարի հնչեցրած գնահատականի հիմնավորվածությանը:

Բուն թեմային անցնելուց առաջ նշենք, որ Դավիթ Լոքյանի արտահայտած նախադասություն-գնահատականը հայերեն չէ եւ իմաստազուրկ է. **ի՞նչ ասել է «հավաքագրման տեսակետից…»:**

Հավաքագրումը (ի գիտություն Կարեն Կարապետյանի, Դավիթ Լոքյանի, Վահե Հակոբյանի) вербовка-ն է: Հետեւաբար դժվար է հասկանալ, թե ինչ ասել է՝ вербовка-ի տեսակետից առաջատար մարզերն են Կոտայքը, Սյունիքը, Արարատը, Արմավիրը:

Ուղղակի ենթադրում ենք, որ նախարարը ցանկացել է նշել համայնքների սեփական եկամուտների հավաքման արդյունքների մասին, բայց օգտագործել է հավաքագրել բառը՝ հաշվի առնելով, որ կառավարության պաշտոնական հաղորդագրություններում միանգամայն տարբեր իմաստ ունեցող երկու այդ բառը շփոթում են գրեթե ամեն օր:

Ինչեւէ, սեփական եկամուտների հավաքման տեսակետից, ըստ Դավիթ Լոքյանի, Սյունիքի մարզը հանրապետության չորս առաջատար մարզերից մեկն է:

Իսկապե՞ս այդպես է, իսկապե՞ս դրանով կարելի է չափել-կշռել-գնահատել Սյունիքի մարզպետարանի ու մարզպետի գործունեությունը:

Սկսենք ընդհանուրից՝ Սյունիքի մարզի ութ համայնքի բյուջեներով 2017-ին նախատեսվել է 4.7 մլրդ դրամ եկամուտ: Այդ թվում՝ սեփական եկամուտը կազմել է մոտ 1.6 մլրդ դրամ կամ եկամուտների մոտ 30 տոկոսը:

էջ 6

Վատիկանում հանդիսավորությամբ բացվել է Սուրբ Գրիգոր Նարեկացու արձանը

Սուրբ Աթոռ կատարած պաշտոնական այցի շրջանակներում նախագահ Սերժ Սարգսյանը Վատիկանում մասնակցել է «Տիեզերական եկեղեցու վարդապետ» հռչակված Աստվածաշնորհ Սուրբ Գրիգոր Նարեկացու արձանի բացման արարողությանը: Բացումը կատարել է Սուրբ Աթոռում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Միքայել Մինասյանը:

Շուրջ երկու մետր բարձրությամբ բրոնզե արձանը ձուլվել է Չեխիայում, հեղինակը Հայաստանի ժողովրդական նկարիչ, քանդակագործ Դավիթ Երեւանցին է, ճարտարապետը՝ Միքայել Հասրաթյանը: Այս նախաձեռնությունն իրականություն է դարձել Միքայել Մինասյանի եւ ռուսաստանաբնակ հայտնի գործարար Արթուր Ջանիբեկյանի բարերարությամբ ու Սուրբ Աթոռում ՀՀ դեսպանության մշակույթի բաժնի պատասխանատու Վարդան Կարապետյանի կազմակերպական ջանքերի շնորհիվ: Արձանը պատրաստված է երկու օրինակից. մեկը տեղադրվեց Վատիկանում, իսկ երկրորդը կտեղադրվի համայն հայության հոգեւոր կենտրոն Էջմիածնում:

Վատիկանի պարտեզներում արձանի հանդիսավոր բացումից հետո տեղի է ունեցել էկումենիկ արարողություն՝ Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի մասնակցությամբ:

Հանրապետության նախագահն այնուհետեւ այցելել է Սուրբ Աթոռում Հայաստանի Հանրապետության դեսպանություն, որտեղ տեղի է ունեցել պարգեւատրման արարողություն:

Նախագահի հրամանագրերով դիվանագետի օրվա կապակցությամբ, Հայաստանի Հանրապետության եւ Սուրբ Աթոռի միջեւ միջպետական հարաբերությունների ամրապնդման եւ զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար Սուրբ Աթոռում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Միքայել Մինասյանը պարգեւատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով, բարեխիղճ եւ արդյունավետ աշխատանքի համար Սուրբ Աթոռում Հայաստանի Հանրապետության դեսպանության գրասենյակի վարիչ Մարիամ Երեմյանը պարգեւատրվել է Երախտագիտության մեդալով, մարդասիրական եւ բարեգործական

անխոնջ գործունեության համար բարերար Սմբատ Կարապետյանը պարգեւատրվել է Մխիթար Հերացու մեդալով, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում ներդրած նշանակալի ավանդի համար Իտալիայի Հանրապետության Սենատի Հայաստան-Իտալիա խորհրդարանական բարեկամական խմբի անդամ, սենատոր Ալդո դի Բիաջո պարգեւատրվել է Մխիթար Գոշի մեդալով:

president.am
05.04.2018

ԱԱՊ օղակի զարգացման տեսլականը քննարկվել է Սյունիքի մարզի բժիշկների հետ

Առաջնային օղակի բժիշկները ոլորտի առաջնագիծն են պահում

Սյունիքի մարզի Սիսիան եւ Գորիս քաղաքներում ՀՀ առողջապահության նախարար Լեւոն Ալթունյանը հանդիպումներ է ունեցել առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակի բժիշկների հետ: Նախարարն ընդգծել է, որ բնակչության հետ ավելի ակտիվ շփումներ ունենալով՝ նրանք ոլորտի առաջնագիծն են պահում: Մարզային իր հանդիպումներն էլ երկու հիմնական նպատակ ունեն՝ առաջնագծի բժիշկներին ծանոթացնել նախարարության կողմից իրականացվող կարեւոր ծրագրերին, որպեսզի նրանց միջոցով դրանք հասնեն բնակչությանը: Եվ երկրորդ՝ համատեղ քննարկել առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխման տեսլականը:

Զարգացման տեսլականը հրապուրիչ է եւ իրատեսական:

Նախարարի խոսքով՝ նպատակն առաջիկա 2 տարվա ընթացքում առաջնային օղակի մասնագետների աշխատավարձերը կրկնակի ավելացնելն է: Ինչպե՞ս՝ թերապեւտիկ հիվանդների բուժումը հիմնականում առաջնային օղակում կամ առաջնային օղակի ցերեկային ստացիոնարներում կազմակերպելու հաշվին: Հենց հիվանդանոցային բուժումից տնտեսված միջոցներն էլ կուղղվեն առաջնային օղակի բժիշկների աշխատավարձերի բարձրացմանը: Այդպես հիվանդները բուժման ընթացքում չեն կտրվի ընտանիքից:

Սա նաեւ ենթադրում ընտանեկան բժշկի, թերապեւտի եւ մանկաբույժի պատասխանատվության բարձրացում իրեն կցագրված բնակչության առողջության պահպանման, հիվանդությունների վաղ հայտնաբերման եւ արդյունավետ բուժման գործում:

Բժիշկներն անկեղծացել են, որ երբեմն չեն կարողանում ընդդիմանալ բնակչի՝ հիվանդանոց կամ թանկարժեք հետազոտության ուղեգրելու պնդումներին: Ըստ նախարարի՝ նման դեպքերում օգնության կհասնեն աշխարհի առաջատար փորձի հիման վրա 2017թ. մշակված եւ տեղայնացված 300 կլինիկական ուղեցույցներն ու գործելակարգերը: Դրանք այժմ թվայնացվում են, որից հետո կներբեռնվեն էլեկտրոնային առողջապահության համակարգ: Դա նշանակում է, որ մեր երկրի բոլոր բժշկական կազմակերպություններում միանման ցուցումների դեպքում կիրականացվեն նույն հետազոտություններն ու բուժումը:

Բոնուսները կծեւավորվեն չափելի արդյունքներով

Լեւոն Ալթունյանը մանրամասնել է, որ հաստատուն աշխատավարձը ձեւավորվում է մասնագիտական գործառույթներով, այդ թվում՝ նոր մեթոդաբանությամբ իրականացվող դիսպանսեր հսկողությամբ եւ կանխարգելիչ հետազոտություններով: Իսկ դրան գումարվող բոնուսները կծեւավորվեն չափելի արդյունքներով՝ սպասարկվող բնակչության շրջանում հիվանդացության եւ հաշմանդամության ցու-

ցանիշների, հոսպիտալացման, անաշխատունակության թերթիկների նվազման, պատվաստումների մեծ ընդգրկվածության, առաջնային օղակում բուժման արդյունավետության, ժամանակին եւ ճիշտ բուժման, չարորակ նորագոյացությունների վաղ հայտնաբերման եւ այլ ցուցանիշներով:

Էլեկտրոնային առողջապահության համակարգի ներդրման դժվարությունները ժամանակավոր են, իսկ հեռանկարը՝ խոստումնալից

Քննարկման ընթացքում, ընդունելով բժիշկների այն կարծիքը, որ էլեկտրոնային առողջապահության համակարգով աշխատելիս դեռեւս դժվարությունների են հանդիպում՝ նախարարն ընդգծել է, որ դրանք ժամանակավոր են: Փոխարենն՝ առաջադեմ այդ համակարգն իր հնարավորություններով ոչ միայն կնպաստի մատուցվող բժշկական ծառայությունների որակի բարելավմանը, այլեւ զգալիորեն կդյուրացնի բժիշկների աշխատանքը, հարմարավետ կլինի նաեւ բնակիչների համար:

Լեւոն Ալթունյանը հավելել է, որ առաջիկա ամիսներին պոլիկլինիկաները կապահովվեն համակարգիչներով, որին կհաջորդի բուժաշխատողների ուսուցումը: Բժիշկները հայտնել են, որ իրենք պատրաստ են եւ ուրախ են ոլորտում իրականացվող բարեփոխումների համար:

ԱԱՊ օղակի բարեփոխման ծրագիրը կընդունվի բժիշկների կարծիքներն ու առաջարկները հաշվի առնելով:

Նախարարը վստահեցրել է, որ բոլոր նկատառումներն ու առաջարկներն ի մի կբերվեն, որոնց լուծումներ կամ պարզաբանումներ կտրվեն: Նա բժիշկներին հորդորել է իրենց կարծիքներն ու առաջարկությունները ներկայացնել առաջնային օղակում ցերեկային ստացիոնարի լիցենզիավորման արդեն մշակված պայմանների կապակցությամբ:

«Ես աշխարհի շատ երկրների բժիշկների հետ եմ շփվել: Հավատացնում եմ, որ դուք անփոխարինելի եք: Պարզապես պետք է մի փոքր ավելի հավատաք ձեր ուժերին եւ առավելագույնս օգտագործեք ներքին ռեսուրսները: Արդյունքում կհասնենք թե՛ առողջապահական կարեւոր ցուցանիշների բարելավմանը, թե՛ ձեր հեղինակության բարձրացմանը»,- ասել է Լեւոն Ալթունյանը:

Սիսիանի եւ Գորիսի ԱԱՊ բժիշկները շնորհակալություն են հայտնել կառուցողական եւ անկեղծ զրույցի համար:

Լեւոն Ալթունյանը նշել է, որ առաջնային օղակի բոլոր բժիշկների հետ նման հանդիպումների արդյունքում ի մի կբերվեն տեղերից ստացված բոլոր առաջարկները: Այնուհետեւ աշնանը երեւանյան մեծ հավաք կկազմակերպվի, որտեղ էլ կընդունվի առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխման ծրագիրը:

moh.am
3 ապրիլի 2018թ.

Գովք մայրության եւ գեղեցկության

Մայրության եւ գեղեցկության տոնի նախօրեին Կապանի արվեստի պետական քոլեջի դահլիճում տեղի ունեցավ ցերեկույթ, որին մասնակցում էին ապրիլյան քառօրյա պատերազմում զոհված Նորայր Գասպարյանի, Գագիկ Փարսադանյանի, Արմեն Գասպարյանի հարազատները: Կրթօջախի դասախոսներն ու սովորողները հանդես եկան երաժշտական կատարումներով ու ասմունքով, հնչեցին հայրենիքը, մայրությունը, հայրենասիրությունը փառաբանող ստեղծագործություններ: Էկրանին սահում էին նահատակ զինվորների լուսանկարները՝ եւս մի անգամ հիշեցնելով, որ նրանք ընկան հանուն Արցախի վրա բացվող խաղաղ առավոտների: Քոլեջի տնօրեն Վարդան Քոչարյանը, շնորհավորելով գեղեցիկ սեռի ներկայացուցիչներին տոնի առթիվ, նաեւ այն միտքն ընդգծեց, որ ապրիլը բոլորիս հիշողության մեջ զուգորդվում է ոչ միայն հայոց մեծ ցեղասպանության, այլեւ ապրիլյան քառօրյա պատերազմի զոհերի հետ: Կապանի «Ազատամարտ» կոմիտեի նախագահ Խորեն Հարությունյանը շնորհակալական խոսք ասաց քոլեջի տնօրինությանը՝ ապրիլյան պատերազմի զոհերի հիշատակը ոգեկոչելու համար: Միջոցառման ավարտին զոհերի հարազատներին հանձնվեցին քոլեջի սովորողների ստեղծած աշխատանքներից:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Շուրջերկրյա ճանապարհորդություն կատարած ինքնաթիռը գալիս է Կապան. հայտնի է, թե ինչ տեսք է ունենալու այն

Կապանի օդանավակայանի համար նախատեսված չեխական «L-410» ինքնաթիռի նկարները, որում վերջինս ներկման փուլում է, օդանավակայանի ֆեյսբուքյան էջում հայտնվեցին մարտի 16-ին, սակայն ավիացիայով հետաքրքրվողների ու նաեւ լայն զանգվածների համար մեծ հաշվով անհասկանալի մնաց, թե կոնկրետ ինչ օդանավի մասին է խոսքը:

Ինչպիսի՞ն է լինելու Կապանի ապագա օդանավը. վիճակագրությունն ու ՋՊՄԿ-ի լռությունը:

Դեռ հունվարին մի քանի մանրամասն էինք ներկայացրել Կապանի ապագա ինքնաթիռի մասին: Ինչպես հայտնի է, այն 5,5 մլն եվրոյով ձեռք է բերել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը: Սակայն վերջինիս ղեկավարությանն ուղարկված մեր հարցերը մնացել էին անպատասխան: Մասնավորապես, հետաքրքրվել էինք, թե կոնկրետ որ ընկերությունից է գնվել այն, խնդրել էինք հայտնել, թե արդյոք նախկինում շահագործվել է, ՀՀ-ում ով է լինելու շահագործողը՝ ստեղծվելու՞ է նոր ավիաընկերություն, թե՞ հանձնվելու է արդեն գոյություն ունեցողներից մեկին (բանն այն է, որ օպերատորը պետք է ունենա օդանավ շահագործողի վկայական, ինչի համար ահռելի ժեշտ է բավարարել մի շարք պահանջներ):

19 հոգու համար նախատեսված օդանավը, ինչպես եւ ենթադրել էինք, ձեռք է բերվել դրա արտադրող «Aircraft Industries» չեխական ընկերությունից: Այս փաստն իր կայքում հաստատել է նաեւ Սյունիքի մարզի զարգացման եւ ներդրման հիմնադրամը (ՍՄԶՆՀ), որը Կապանի օդանավակայանի վերագործարկման ծրագրի ներդրողներից է:

Հիշեցնենք, որ Կապանից օդանավը ժամանելու է «Զվարթնոց» օդանավակայան, թռիչքի տեւողությունը՝ 40 րոպե: ՍՄԶՆՀ-ի փոխանցմամբ՝ հետագայում հնարավոր է թռիչքներ իրականացվեն նաեւ այլ ուղղություններով (Հայաստանի ներսում):

Կապանի օդանավակայանի ուղեւորային համալիրի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա. կլինի հանրային քննարկում

Քանի որ օդանավակայանի վերագործարկման ծրագրի ու նոր համալիրի կառուցման մանրամասներին նախկինում անդրադարձել ենք, այս անգամ շեշտը կդնենք միայն ինքնաթիռի վրա:

Թե ինչու է հենց տուրբոպտուտակային ինքնաթիռ ընտրվել, Սյունիքի մարզպետարանը մինչ այս «Հետքին» հայտնել էր. «Շահագործողական տվյալներից ելնելով՝ այս պահին ավելի նպատակահարմար է տուրբոպտուտակային շարժիչներով օդանավերի շահագործումը, ինչը չի բացառում այլ օդանավերի սպասարկումը օդանավակայանում»:

Իր հերթին ՍՄԶՆՀ-ն իր կայքում սա հետեւյալ կերպ է պատճառաբանել. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռեակտիվ ինքնաթիռը մեծ շրջան պետք է կատարի վայրէջքի համար, որով մտնելու է եւ ազատագրված տարածքներ, եւ մասամբ հարեւան պետության տարածք՝ վերականգնված օդանավակայանում ռեակտիվ ավիացիա չի օգտագործվելու: Դրա փոխարեն օգտագործվելու են տուրբոպտուտակային շարժիչով ժամանակակից ինքնաթիռներ, որոնք վայրէջքի համար խնդիր չուներն մեծ մանեւրումներ կատարելու»:

Հարեւան պետությունը տվյալ դեպքում Իրանն է, համենայն դեպս, հենց այդպես պիտի ընկալել, քանի որ Ադրբեջանի հետ ներկա

սահմանը շատ հեռու է: Մյուս կողմից՝ հիշեցնենք, որ խորհրդային տարիներին Կապանում վայրէջք կատարող ռեակտիվ «Յակ-40» օդանավերը, ճիշտ է, հատում-անցնում էին նաեւ «եղբայրական» Ադրբեջանի օդային տարածքը (խոսքը 1990-ականներին ազատագրված տարածքների մասին է), ինչը, բնականաբար, խնդիր չէր այն ժամանակների համար, այդուհանդերձ, Իրանի տարածք չէին մտնում: Ավելին՝ հենց հայ-ադրբեջանական սահմանի վրա էր գտնվում Կապանի օդանավակայանի օդային երթեւեկության կարգավարների (դիսպետչերների) կետը, որի վրայով անցնում էր վայրէջքի գլիսադան:

Վերադառնալով Կապանի «L-410»-ին՝ հստակ կարող ենք ասել, որ խոսքը «L-410UVP-E20» մոդիֆիկացիայի մասին է, որի տեխնիկական պարամետրերին անդրադարձել ենք: Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը տեղական «Սոսի» հեռուստաընկերությանը հայտնել էր, որ օդանավն արտադրվել է 2016 թ., սակայն եթե հավատալու լինենք «L-410»-ի ոչ պաշտոնական ֆեյսբուքյան էջին, որը պարբերաբար տեղեկություններ է հրապարակում այս օդանավերի վերաբերյալ, այն արտադրվել է 2015 թ. ու հետաքրքիր ճանապարհ է անցել: Ըստ այդմ՝ Կապանի օդանավը լինելու է արտադրությունից ի վեր OK-JPP չեխական գրանցում ունեցած ինքնաթիռը (առաջ անցնելով՝ նշենք, որ ՀՀ-ում դրան տրվելու է հայկական գրանցում՝ EK-.....): Բնականաբար, առաջին հայացքից դա ոչ մի բան չի ասում, այնինչ իրականում սա շուրջերկրյա ճանապարհորդություն կատարած ինքնաթիռ է:

Միանգամից ասենք, որ մեզ հետ զրույցում չեխ ավիասիրահարները հաստատել են, որ նկարում պատկերվածն իսկապես OK-JPP-ն է: Ավելին՝ նրանց տեղեկացմամբ՝ նույն գույներով եւս երկու այսպիսի օդանավ (RA-67059 եւ RA-67060) դեռ 2017-ի հոկտեմբերին ուղարկվել են մեկ այլ պատվիրատուի՝ Ռուսաստանի «СИЛА» ավիաընկերությանը: OK-JPP-ի ու արդեն Ռուսաստանում գտնվող օդանավերի նկարները հուշում են, որ մեր չեխ զրուցակիցները չեն սխալվում: Այսինքն՝ նայելով ռուսական օդանավերին՝ կարող ենք հասկանալ, թե ինչ նոր տեսք է ունենալու Կապանի ինքնաթիռը:

Կապանի ինքնաթիռն այսպիսի գույներ կունենա

OK-JPP-ն (գործարանային համարը՝ 3017) թողարկվել է 2015-ին, օդանավերի չեխական ռեգիստրում գրանցվել է այդ տարվա սեպտեմբերին: Արդեն 2015-ի հոկտեմբերին ինքնաթիռը Չեխիայից մեկնել է Չինաստան՝ մասնակցելու «CIGAC 2015» միջազգային ցուցադրությանը: Մասնակցության նպատակը «L-410» օդանավերը չինական շուկային ու հասարակությանը ներկայացնելն էր:

Չինաստանում ցուցադրական թռիչքներ կատարելուց ու դրական արձագանք ստանալուց հետո OK-JPP-ն, հաղթահարելով Չուկոտկայի, Ալյասկայի ու Կանադայի օդային տարածքները, հասել է Լաս Վեգաս, որտեղ մասնակցել է «NBAA 2015» ցուցադրությանը: Ըստ արտադրող ընկերության պաշտոնական կայքի՝ ինքնաթիռը մեծ հետաքրքրություն է առաջացրել ամերիկյան հանրության եւ, մասնավորապես, ռեգիոնալ ավիաընկերությունների շրջանում:

ԱՄՆ-ից օդանավը կրկին մեկնել է Կանադա, որտեղ որոշ տեխնիկական աշխատանքներ են կատարվել դրա վրա, ապա Գրենլանդիայի ու Իսլանդիայի վրայով վերադարձել է Եվրոպա՝ Չեխիայի Կունովիցե քաղաք, որտեղ գտնվում է «Aircraft Industries»-ի գործարանը: Հոկտեմբերի 8-ից մինչեւ նոյեմբերի 28-ն իր ճանապարհորդության ընթացքում օդանավն անցել է 40.000 կմ, օդում եղել շուրջ 110 ժամ, կատարել 21 միջանկյալ վայրէջք: Արտադրող ընկերությունը նշում է, որ ինքնաթիռը ճանապարհն անցել է առանց տեխնիկական խնդիրների, եղել տարբեր ջերմաստիճանային պայմաններում ու տարբեր բարձրությունների վրա:

Շուրջերկրյա ճանապարհորդությունը

Հիշեցնենք, որ ներկայում «L-410»-ը շահագործվում է Եվրոպայում, Ասիայում, Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում թե՛ որպես քաղաքացիական, թե՛ որպես ռազմական օդանավ: Այն աշխատում է -50՛C-ից մինչեւ +50՛C ջերմաստիճանի պայմաններում:

«L-410»-ի ֆեյսբուքյան էջից տեղեկանում ենք նաեւ, որ օդանավը նախատեսված է «Atlantis European Airways» հայկական ընկերության համար: Այսինքն՝ վերջինս պիտի լինի դրա շահագործողը: Հիշեցնենք, որ այս պահին ՔԱԳՎ պետի նախկին տեղակալ Արամ Մարությանին պատկանող ընկերության 2 հատ «Airbus A320» ինքնաթիռներից մեկը (EK-32002) շահագործվում է Հունաստանում, իսկ մյուսը (EK-32008) կանգնած է: «Atlantis»-ը, հիշեցնենք, ի սկզբանե առավել հայտնի էր «Austrian Airlines» եւ «Czech Airlines» ընկերությունների հետ համագործակցությամբ, որոնցից առաջինի հետ մինչ օրս «codeshare» թռիչքներ է կազմակերպում դեպի Վիեննա:

Վահե Սարուխանյան
4 ապրիլի 2018թ.

Կհրապարակվի «Սյունյաց երկիր» թերթի հատուկ համար՝ նվիրված Սուրբ Հովհան Որոտնեցուն

Հայրենապաշտ մի խումբ սիսիանցիների նախաձեռնությամբ ու ֆինանսավորմամբ խմբագրությունը սկսում է «Սյունյաց երկիր» թերթի հերթական հատուկ համարի նախապատրաստական աշխատանքները:

Համարը նվիրված կլինի միջնադարյան հայ նշանավոր փիլիսոփա, մանկավարժ եւ եկեղեցական գործիչ Սուրբ Հովհան Որոտնեցուն:

Հովհան Որոտնեցին Սյունյաց աշխարհի բոլոր ժամանակների ամենանշանավոր դեմքերից է (1315-1388թթ.):

Սյունիքի Որոտան գավառի Վաղատին գյուղում ծնված Որոտնեցու գործունեության ամենաերեւելի էջերից մեկը Տաթեւի տիեզերահռչակ համալսարանի հիմնադրումն է:

Որոտնեցու դերը բացառիկ է հատկապես անտիկ փիլիսոփայության խոշորագույն մտածողներից մեկի՝ Արիստոտելի (մ.թ.ա. 384-322) իմաստասիրական ուսմունքի, մասնավորապես նրա տրամաբանական երկերի հետ ունեցած առնչությունների տեսակետից:

Բոլոր նրանք, ովքեր կցանկանան մասնակցել եռամեծար փիլիսոփա, Սուրբ Հովհան Որոտնեցուն նվիրված համարի նախապատրաստական աշխատանքներին, կարող են իրենց առաջարկությունները, հոդվածները, ուսումնասիրությունները ներկայացնել թերթի խմբագրություն մինչեւ ս.թ մայիսի 30-ը:

«Սյունյաց երկիր»

Կփոխհատուցվի Մեղրիի տարածաշրջանի բնակիչների անհատական ոռոգման պոմպերով օգտագործած էլեկտրաէներգիայի արժեքը

ՀՀ կառավարության որոշմամբ գումար կհատկացվի ՀՀ Սյունիքի մարզպետարանին՝ Մեղրիի տարածաշրջանի գյուղատնտեսությունը զարգացնելու եւ բնակչության կողմից անհատական ոռոգման պոմպերով 2016թ. օգտագործված էլեկտրաէներգիայի արժեքը փոխհատուցելու նպատակով: Փոխհատուցում կստանա տարածաշրջանի 76 շահառու:

gov.am

1918-1920 ԹԹ. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

1918-1920 թթ. պատմական իրադարձությունները ձեւավորվեցին շարունակվող Առաջին համաշխարհային պատերազմի տեսադաշտում: Ամեն ինչ նոր շրջադարձի ենթարկվեց 1917թ. Ռուսաստանում նախ փետրվարյան հեղափոխությունից, այնուհետեւ հոկտեմբերյան հեղաշրջումից հետո: Կարճ ժամանակ անց տապալվեց նա եւ Օսմանյան ինքնակալությունը: Եվ այս փլատակների վրա հայ ժողովուրդը պետք է դժվարին դիմակայությամբ գրեր իր պատմության նոր էջը:

Իրադարձությունները հաջորդում էին մեծ արագությամբ՝ Անդրկովկասյան կոմիսարիատ, Անդրկովկասյան սեյմ, Անդրկովկասի Դաշնային Հանրապետություն, Սարդարապատի ճակատամարտ, Հայաստանի Հանրապետության հռչակում, կամավորական խմբերից ձեւավորվող հայոց բանակ, մինչեւ Երզնկա հասած ռուսական զորքերի նահանջ, Երզնկայի պարտվողական զինադադար, հայ-թուրքական, հայ-ադրբեջանական պատերազմներ, հայ-վրացական բախումներ, Լենին-Աթաթուրք հակահայ դաշինք, բոլշեւիկյան հասունացող, ուժգնացող ազդեցություն, Անկախ Հայաստանի բոլշեւիկացում, Հանրապետությունը կերտած ուժերի հանդեպ հաշվեհարդար, փետրվարյան ապստամբություն եւ ողջ մնացած ազգային գործիչների փախուստ երկրից:

Հայաստանի Հանրապետությունն ստեղծվեց շատ մեծ դժվարություններով եւ անցավ ծանր փորձությունների ճանապարհ: 1918-1920 թթ. հայոց պատմության ամենաբեկումնային տարիներն են, որոնք չէին կարող իրենց անմիջական անդրադարձը չունենալ հայ հոգեւոր կյանքում, հատկապես գրականության մեջ:

Գրական-մշակութային կյանքը չդադարեց: Երեւանում ու Թիֆլիսում լույս էր տեսնում մամուլ, Ալեքսանդրապոլում հիմնադրվեց պետական համալսարանը: 1919-ին Երեւանում հիմնվում է գրադարան, գործում են թատերական վարժարան, երաժշտական, հայոց լեզվի, մանկավարժական դասընթացներ: Տեղի է ունենում Երեւանի նոր կայարանի հանդիսավոր բացումը: Աստաֆյանն անվանափոխվում է Աբովյան:

Գրական քննադատ, այդ տարիներին նաեւ պետական գործիչ՝ խորհրդարանի անդամ, 1919-ին լուսավորության եւ արվեստի նախարար Նիկոլ Աղբալյանը նույն թվականի սեպտեմբերի 28-ին հիմնադրեց Հայ գրական ընկերությունը, որի առաջին ձեռնարկումներից մեկը հոկտեմբերի 16-ին Չարենցին նվիրված նրա դասախոսությունն էր՝ «Մի նոր բանաստեղծ»: Նորաստեղծ երկիրն իր նոր բանաստեղծի հայտնությունն էր ավետում:

Աղբալյանը Չարենցի գրքերին ծանոթացել էր տարբեր խմբագրություններում նրա թողած օրինակներով: Անձնապես ծանոթներ չէին: Իսկ նրա դասախոսության ժամանակ Չարենցն ուսուցչություն էր անում Բաշքյադիկլար գյուղում: Թերթերից տեղեկանալով դասախոսության մասին՝ Չարենցը ներկայանում է Աղբալյանին եւ նրա հրամանով նշանակվում հանրային կրթության ու արվեստի նախարարության հատուկ հանձնարարությունների կոմիսար, որտեղից իր դիմումի համաձայն ազատվում է հունիսի 1-ին, երբ արդեն նախարար էր Գ. Ղազարյանը:

Այս տարիների իրադարձությունները գեղարվեստական երկերում երբեմն ուղղակի հավաստիությամբ են արտահայտվում: Այս տեսակետից ուշագրավ են Հովհաննես Թումանյանի, Լեւոն Շանթի, Ավետիս Ահարոնյանի, Նիկոլ Աղբալյանի, Կոստան Զարյանի, Ավետիք Իսահակյանի, Վահան Տերյանի, Եղիշե Չարենցի, Ակսել Բակունցի, Վահան Թոթովենցի, Լեռ Կամսարի, Գուրգեն Մահարու եւ մի քանի այլ գրողների ժառանգության առանձին էջեր, որոնցից կանդրադառնանք մի քանիսին եւ , առաջին հերթին, Չարենցին՝ որպես ժամանակի ամենաազդեցիկ ներկայություն:

Չարենցի սերտ կապվածությունն իր օրերին, այդ թվում՝ 1918-1920 թթ. իրադարձություններին, ակնհայտ է ինչպես կենսագրական, այնպես եւ ստեղծագործության հավաստիությամբ: Եվ ահա պատկերը՝ այդ տարիների մասին գրել է 17 պոեմ, բանաստեղծական 4 շարք, 1 վեպ, 1 հոդված եւ շուրջ 30 բանաստեղծություն: Ընդ որում 1918 թվագրությամբ բանաստեղծություն չունի, 1919, 1920 թվականներ են: Ահա այդ գործերը.

ա)պոեմներ՝

«Սոմա», 1918, «Հատված», 1918, «Ամբոխները խելագարված», 1919, «Նայիրի երկրից», 1920, «Դեպի ապագան», 1920, «Բրոնզե թեւերը կարմիր գալիքի», 1920, «Երգ ժողովրդի մասին», 1920, «Ամենապոեմ», 1920-1921, «Խաղաղության ռադիո», 1921, «Չարենց – նամե», 1922, «Մաճկալ Սաքոյի պատմությունը», 1924, «Ստամբոլ», 1924, «Իմ ընկեր Լիպոն», 1928, «Խմբապետ Շավարշը», 1929, «Պատմության քառուղիներով», 1933, «Մահվան տեսիլ», 1933, «Զրահապատ «Վարդան Զորավար»», 1933,

բ)բանաստեղծական շարքեր՝

«Ողջակիզվող կրակ», 1918, 1919-1920, «Էմալե պրոֆիլը Ջեր», 1920, «Փողոցային պչրուհուն», 1920, «Տաղարան», 1920,

գ)վեպ՝

«Երկիր Նայիրի», գրել է 1921-1924 թթ., «Նորք»-ում տպագրել է 1924-1925 թթ., առանձին գրքով լույս է տեսել է 1926-ին,

դ) բանաստեղծություններ՝

առավել կարեւորներն են՝ «Տաղ անծնական», 1919, «Անքնություն», 1919, «Խավար է: Գիշեր է…», 1919, «Աղմկում է իմ սրտում», 1919, «Մորս համար գազել», 1920, «Մարիոնետկա», 1920, .Վահան Տերյանի հիշատակին», 1920, «Մահվան տեսիլ», 1920, «Աստղիկ», 1920,

ե) հոդված՝

«Սեւրի դաշնագրից մինչեւ «Հայ կանանց ալեծուփ մազերը» կամ ընդհակառակը», 1925:

Ժամանակի դեմքը քաղաքական դիրքորոշումն էր՝ պայմանավորված ռուսական հեղափոխության հանդեպ վերաբերմունքով: Ինքնակալության տապալումը խանդավառել էր ոչ միայն Չարենցին, այլեւ քաղաքական տարբեր ուժերի, որովհետեւ հոգնել էին ինչպես ինքնակալի, այնպես եւ փոխարքաների կամայականություններից, ովքեր, նստելով Թիֆլիսում, հատկապես բացասական գործելակերպ էին դրսեւորում հայության հանդեպ:

Չարենցը ողջունեց հեղափոխությունը եւ առանձնապես ա՛յն հույսով, որ այդ նոր ալիքը փրկություն կբերի իր ժողովրդին: Այս մտայնության արգասիք է «Ինչպես երկիրս անսփոփ, ինչպես երկիրս բախտազուրկ» բանաստեղծությունը:

«Չարենց-նամե»-ում որոշակի վերաբերմունքով բանաստեղծն ուրվագծում է իր կյանքի ուղին: Առաջին սիրո պես նրա համար նաեւ հայրենիքի սերն էր, որ «Եկավ – // Ուսերիս վրա // Մի անհուն տխրություն բարդեց»(ԵԺ, 6 հատորով, Երեւան, 1962-1968, հ. 2, էջ 159, այսուհետ եւ կնշվի միայն հատորն ու էջը): Հիմա, ահա, 1918 թվականն է: Հիշում է իր «Ողջակիզվող կրակ» շարքի ենթաշարքերը: Այնուհետեւ. «Ազատվեց հին կապանքից // Հոգիս՝ վիթխարի ցավով»: Ի՞նչ նկատի ունի այս տողերով՝ հայրենիքի նկատմամբ սե՞րը… Դեռեւս շարունակում է. «Տասնըութ: // Թվական հրի: // Ողջակեզ – կարմրակեզ բոցում»: Այսինքն՝ նվիրում հեղափոխությանը. «Արթնացավ արեւ՛ – նայիրյան // Իմ հոգու նո՛ր զնգոցում»: Աչքի առաջ իրական հայրենիքն էր. «Հրդեհ էր: Անհատնում կրակ: Արնաքամ վերքեր կարեւեր» եւ «Նո՛ր հայրենիք»-ի երազային հույսը, որ Սոմային ուղղված դիմումն է հիշեցնում.

Ինձ կանչում էր կարծես անծիր
Կարոտով – երկիր Նայիրին. –

Նորից Հայաստան գնացի
Տասնըհինը թվի վերջերին:

Այնտեղ – Նայիրի երկրում,
Հնավանդ ցանկությամբ ուրիշ՝
Արդեն խմբապետ Դրոն
Պարզել էր երեքգույն դրոշ:

Պարզել էր – Երեւան քաղաքում,
Հնամյա Մասիսին մոտիկ:

…Որպես քար՝ տխրությունն իջավ,
Ծանրացավ ուսերիս,
Սրտիս (2, 171):

Այստեղ արդեն խորհրդային կարմիր բանաստեղծի թարմ արձագանքն է մոտիկ անցյալին: Բայց առաջիկա գաղտնագրված տողերը այլ բան են հուշում: Ահա 1919-ի վերջերին նա Կարսում է.

Նույն երկինքն է՝ կաթսա արեւի
Նույն խշշոցը քչփչան ջրի…

Բայց արեւը իզուր է փորում
Կուրացած աչքերը շենքերի:

Իզո՛ւր է նայիրյան հեռուն
Ունկնդրում քչփչան ջրին (2, 172):

Ի՞նչ է ասում խոսուն պատկերների այս գաղտնագիրը. «Նույն երկինքն է՝ կաթսա արեւի»՝ ակնարկ է հեղափոխությանը, «Նույն խշշոցը քչփչան ջրի…»՝ ակնարկ է թուրքերի եւ բոլշեւիկների գաղտնի բանակցություններին: Երրորդ տունը հեղափոխության իզուր, ապարդյուն լինելն է, նաեւ զգուշացնում է ռուս – թուրքական վտանգավոր դաշինքից:

Չարենցն սթափվում է եւ այստեղ է, որ հիշում է, թե ինչպես «մի լուրջ քննադատ մի օր», այսինքն՝ Նիկոլ Աղբալյանը. «Սարսելով դահլիճն ու ֆոյեն – // Ավետեց ամբողջ աշխարհին, // Որ ծնվել է – մեծ մի պոետ»: –

Համենայնդեպս խորհրդային առաջին տարիներին, երբ ինքն իրեն համարում էր հեղափոխության բանաստեղծ, ծանր ծաղր կա մոտիկ անցյալի ողբերգական իրադարձություններին, որ երեւում է «Ամենապոեմ»-ում եւ արտասահմանից վերադառնալուց հետո գրած «Սեւրի դաշնագրից մինչեւ «Հայ կանանց ալեծուփ մազերը» կամ ընդհակառակը» պամֆլետում: Ծաղրում է ազգային երազանքը, այն, որ վարժապետ Սողոն «Դարերի մշուշի վրա // Գրում էր «Վեց վիլայեթ»: Ասածն այն է, որ ցանկալին դառնում է ծիծաղելի, երբ իրականն է ձեռքից գնում:

Որքան էլ Չարենցը փորձում է 1920-1921 թթ. անցման օրերին գրած այս պոեմում թաքցնել իր նահրյան մորմոքը, այնուամենայնիվ ակնարկները կան. «Իսկ եթե հույսերից իմ այս վառ // Իմ սրտում պիտ մնան վերքեր…»: Այդ վերքերը մնացին, ժամանակի հետ խորացան, ու մրմուռը չանցավ:

Չմոռանանք՝ Առաջին Հանրապետության ղեկավարությունը 1920 թ. դեկտեմբերի 2-ին (եւ ոչ թե նոյեմբերի 29-ին) իշխանությունը շատ սահուն փոխանցեց բոլշեւիկներին: Ավելի վաղ՝ 1920 թ. ապրիլի 28-ին խորհրդայնացած Ադրբեջանից Հայաստան թափանցած Հեղկոմը՝ Ս.Կասյան (նախագահ), Ա.Մռավյան, Ս.Տեր-Գաբրիելյան, Ա.Նուրիջանյան, Ա.Բեկզադյան, Ի.Դովլաթյան, կատարում էր Ադրբեջանի իշխանությունների հրահանգները եւ առաջին իսկ օրվանից նախկին իշխանության ներկայացուցիչների հանդեպ դիմեց դաժան բռնությունների:

Սիմոն Վրացյանն այսպիսի փաստ է վկայում. Երեւանում հարգված Թաղիանոսի «կոմունիստ որդին հեռացել էր Հեղկոմի հետ եւ կռվում էր Հայրենիքի դեմ: Հայրը որոշել էր իր ձեռքով սպանել որդուն եւ հրացանը ուսին գնաց ռազմաճակատ, ուր եւ նահատակվեց տաք կռվում» («Հայաստանի Հանրապետություն», Թեհրան, 1982, էջ 543, այսուհետեւ՝ ՍՎ ՀՀ):

Չարենցը 1920 թ. դեկտեմբերին ընդունվել էր կոմունիստական կուսակցության շարքերը: Նախ գաղափարապես, այնուհետեւ քաղաքացիական դիրքորոշումով ընտրեց այն ճանապարհը, որով գնում էր իր գրական ուսուցիչ Վահան Տերյանը: Փետրվարյան ապստամբության օրերին Յանուշեւսկու ջոկատում Արտաշատի դիրքերում էր՝ նախ որպես «շարքային կարմիրբանակային, վերջում՝ «Ազատամարտ» զրահագնացքի քաղղեկ» («Գիրք մնացորդաց», Երեւան, 2017, էջ 305, այսուհետեւ՝ ԳՄ): Այդ ծառայության համար նրան տրվել է կարմիր պարտիզանի վկայական:

Իրականության հանդեպ Չարենցի ծաղրը, անգամ կծու հեգնանքն այլ բան չէր, քան վշտի ծիծաղ: Հենց այդ վշտի ծիծաղն աներեւույթ քողով ակնհայտ ողբերգության վերածվեց «Երկիր Նայիրի» վեպում: Մահվան այսաշխարհում Չարենցն ինքն իրեն տեսավ որպես խեղկատակ. «Ես երգում եմ – ակամա: // Ի՛նչ էլ երգեմ. կուզեք – սեր, // կուզեք – մահ: // Ես խեղկատակ եմ հիմա» (1, 218): Կյանքին ուղղված այս հայացքով չգիտես՝ լալի՞ս է, թե՞ ծիծաղում: Ահա այդ հոգեբանական ապրումներով էլ գրեց «Երկիր Նայիրի» վեպը: Ինչպե՞ս կարող էր «Մահվան տեսիլ» (1920) եղերերգի ինքնազոհաբերման ծայրահեղ հոգեվիճակն ապրած բանաստեղծը մեկ տարի անց սկսեր ծաղրել իր ամենասրբազան ապրումները: Չէ՛ր կարող: Չէ՛ր կարող եւ վերջ: Ստեղծագործական շունչը պետք է ճիշտ զգալ՝ իրեն տեսնել որպես կամավոր զոհ, որպես անհեթեթության հասնող ցնորական վիճակի մատնված խեղկատակ, ով ամեն ինչ անում էր հայրենիքը փրկելու համար՝ 1915-ին կամավորական խմբերում էր, 1921-ին՝ բոլշեւիկյան դիրքերում: Չարենցն ապրում էր հայրենիքի փրկության տագնապներով եւ ապրում էր փակուղուց ելք որոնողի ճգնաժամ: Ահա այս թրթիռներով է գրված «Երկիր Նայիրի» վեպը:

«Բոլորովին այլ ընթացք ստացան դեպքերը Կարսի ճակատում: Այստեղ գործում էին զորավար Հովսեփյանի բրիգադը – առաջին գունդ, գնդ.՝ Մազմանյան «…»: Կարսի ճակատում գործում էին սավառնակներ եւ «Ազատամարտ» զրահագնացքը: Կարսի բերդապահն էր զորավար Փիրումյանը, իսկ բերդի հրետանիի պետն էր բոլգար սպա գնդ. Բաբաջանովը: Կարսի զորախմբի ընդհանուր հրամանատարն էր զորավար Սիլիկյանը, սպայակույտի պետ՝ գնդ. Վեքիլյանը: «…»: Զորքի մի մասը շտապ կերպով զինված էր Անգլիայից նոր ստացված Ռոս հրացանով, որոնց վարժ չէր: Թիկունքը լավ կազմակերպված չէր եւ հակապետական տարրերը՝ բոլշեւիկները կարողանում էին դժվարություններ առաջացնել: Այսպես հոկտ. 2-ին «…» խորտակվեց ճակատը զինվոր տանող գնացքը՝ 14 վագոններ ջարդվեցին, սպանվեց 12 եւ վիրավորվեց 43 հոգի: Բոլշեւիկների գործն էր այս: «…»: Հոկտեմբերի 28-ին նրանք (թուրքերը՝ Դ. Գ.) գրավեցին Վեզենքոյի բարձունքները: Ամբողջ հոկտ. 28-ին տաք կռիվներ տեղի ունեցան: Մազմանյանի զորամասը ձգտում էր ետ խլել Վեզենքոյը: «…»: Համաձայն տրված հրամանի հոկտ. 30-ի առավոտյան մեր զորքերը պիտի անցնեին հակահարձակման Վեզենքոյը գրավելու նպատակով: Սակայն առաջին գունդը մերժեց կատարել հրամանը եւ տեղից չշարժվեց: Հուսահատ եւ անզոր՝ գնդ. Մազմանյանը ամենքի առջեւ մաուզերի երկու գնդակից ինքնասպանություն գործեց:

Այս եւս չազդեց զորքի տրամադրության վրա: Այդ միջոցին մեծ ուժով հարձակման դիմեցին թուրքերը: Սկսվեց խուճապային փախուստ: «…»: Մեր սավառնակը թռավ Երեւան: Կարսն ընկավ թշնամու ձեռքը: Գերի մնացին զոր. Փիրումյանը, զոր. Արարատյանը «…», 30-ի չափ զանազան աստիճանի սպաներ եւ մոտ 3000 զինվորներ» (ՍՎ, ՀՀ, էջ 479-480):

Գերիների մեջ էին նախարար Բաբալյանը, արքեպիսկոպոս Գարեգին Հովսեփյանը, փոխնահանգապետ Չալխուշյանը, քաղաքագլուխ Նորհատյանը եւ բնակչության մեծ մասը:

Երեք օր շարունակ քաղաքը թալանի ու արյան մեջ էր: Հինգերորդ օրը գերիներին այցելում են հայ կոմունիստներ , եւ իրենց թշնամիներին մատնում տաճիկներին: Հեղկոմի անդամներ էին: Այնպես էին հավատացրել սրանց տաճիկ սպաները, թե իբր թե Կարսը պիտի հանձնեն բոլշեւիկյան իշխանության: Եվ ամեն կերպ փայփայում էին կոմունիստ տականքներին. փոխարենը սրանք մատնություն էին անում եւ ցույց տալիս պահեստների տեղերը եւ անհրաժեշտ տեղեկություններ էին տալիս հայ զորքի եւ երկրի վերաբերյալ: «…»: Զոհ գնացին Կարսում միմիայն 6000 հայեր» (ՍՎ, ՀՀ, էջ 481):

Չարենցին հայտնի էր Մազութի Համոյի նախատիպ Համբարձում Նորհատյանի հայրենասիրական բարձր նկարագիրը, հայտնի էր, որ 1918 թ. ապրիլի 12-ին Կարսի կռիվներում Մազրայի մոտ նահանջի ճանապարհը պաշտպանելիս հերոսի մահով ընկել էր Կարսի քաղաքագլխի որդին՝ Գեւորգ Նորհատյանը(միջանկյալ նշենք Ղարաքիլիսայի կռիվներում անհայտ կորավ ապագա վարչապետ Համազասպ-Համո Օհանջանյանի որդին՝ Մոնիկը «Զանգեզուրի կռիվների ժամանակ 1920-ի հունիսին սպանվեց Քաջազնունու սպա որդին, ավելի վաղ վիրավորվել էր Մ. Շաթիրյանի որդին): Այս ամենը ոչ թե խոսքի, այլ գործի բարձր բարոյականություն էր, որի սահմանը Չարենցը երբեք չանցավ եւ խորհրդային գրաքննության պայմաններում ստեղծեց խորհրդանշական շատ թաքնված հանգույցներ ու գաղտնագրեր ունեցող մի վեպ, որը պետք է ճիշտ կարդալ եւ այդ դեպքում, ինչպես ինքն է ակնարկում, «Հասկացողը կհասկանա» (ավելի հանգամանորեն տես Դ. Գասպարյան, «Երկիր Նայիրի» վեպը, «Հայ գրականություն», գիրք 6, Երեւան, 2017 էջ 241-283):

Չարենցի պես անմնացորդ հայրենասեր բանաստեղծն ուղիղ անդրադարձ չունի հայոց պետականության վերականգնման կապակցությամբ:

Ո՞ւր էր Չարենցը 1918թ. մայիս-հունիս ամիսներին: Ամենայն հավանականությամբ Մայկոպում, ուր, 1918-ին Կարսն ու նահանգը թուրքերի վերահսկողության ներքո անցնելուց հետո, տեղափոխվել էր Սողոմոնյանների ընտանիքը: Իսկ նրա Հյուսիսային Կովկասում լինելու հավանականությունը հուշում են մի քանի տվյալներ՝ այցելել է ընտանիքին, «Սոմա»-ն թվագրված ու տեղագրված է. «1918, հունիս-հուլիս, Ցարիցին»: Ահա նաեւ իր վկայությունը. «1918թ. Հյուսիսային Կովկասում՝ Մայկոպում եղել եմ կամավոր կարմիրբանակային» (ԳՄ, էջ 305): Այս օրերին անպայման եղել է նաեւ Թիֆլիսում, ուր առանձին գրքով տպագրել է «Սոմա» պոեմը: Այս ճշտումն անհրաժեշտ է այնքանով, որքանով առաջնային է անմիջական ներկայության հարցը:

Հայոց պետականության վերականգնման անդրադարձն այսպես, թե այնպես հենց «Սոմա» պոեմն է: Սա քնարական պոեմ է առանց դիպարի, բայց ամեն ինչ ակնհայտ է: Եթե հայրենիքի որոնում չեն, հապա ի՞նչ են այս տողերը.

Դարեր շարունակ, անվերջ, անդադրում,
Ու սիրտս – գարուն,
Կյանքս երգ շինած՝ քե՛զ էի փնտրում
Այս չար աշխարհում (2, 71):

Սոման՝ եւ՛ որպես հնդկական դիցաբանության գլխավոր աստվածներից մեկը, եւ՛ որպես արբեցնող «սրբազան խմիչք», «սրբազան սեր» այս դեպքում ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ հայրենիքի ոգու մարմնավորում: Դա են հուշում մեջբերված հատվածի հաջորդ տողերը. «Բայց ես գիտեի, որ մեռնում է նա, // Ով որ քեզ սիրե: // «…»: // Բայց տեսա հանկարծ քո դեմքը վերջին // Այս աղջամուղջում»: Սա հե՛նց հայրենիքի դեմքն է.

Քո դեմքը տեսա, որպես սրբազան
Մի զոհաբերում,
Քո դեմքը տեսա աշխարհասասան
Այս հրդեհներում (2, 72):

Նույնն է նա եւ հաջորդող տողերում. «Օ, Սրբազան հա՛րս դու ազատության, // Դու – ազատությո՛ւն,// Դու – վերջին ցնորք վերջի՛ն քաղցրության, // Դու – ոգու խնդում»: Ինչո՞ւ է օրհնում «Վայրկյանը կարմիր աշխարհում այս չար». Մի կողմից՝ հեղափոխություն, մյուս կողմից՝ ազգային վիճակ: Դար ու դարեր մխացող սպասման պահը վերարծարծվում է հաջորդաբար: Նույնն են ասում նաեւ գիշերվա բանձր մթնում գերեզմանից դուրս թռչող հրե սրի, երկունքի ու մահվան պատկերները: Իսկ մի՞թե ճակատագրական պահին համայն հայությանն ուղղված կոչ չեն այս խոսքերը. «Հե՛յ հեռավոր ընկերներ ու եղբայրներ,– // Դուք չե՞ք լսում. Ձե՛զ ենք կանչում,– // Զվարթ ու սեգ, // Եկե՛ք, մտե՛ք շուրջպարը մեր– // Եկե՛ք, եկե՛ք»: Նույնն է 8-րդ գլուխը.

Ու գալիս են անվե՛րջ անվե՛րջ
Ամբոխները ահագին,

Որ կյանքը հին ու սնամեջ
Ողջակիզեն կրակին (2, 78):

Նույնն են եւ եզրափակիչ տողերը.

Կյանքս կմարի՝ հին, չնչին մի կայծ
Քո ոսկի հրում–

Բայց վառվի՛ պիտի սիրտս մոխրացած
Քո բոլոր գալիք արշալույսներում (2, 79):



Սա հայոց պետականության վերականգնման օրհներգն է՝ փարած հեղափոխության արշալույսին:

Նույնն է նա եւ «Ամբոխները խելագարված» դարձյալ քնարական պոեմը: Սարդարապատի ճակատամարտը երկաթուղու կայարանում էր: Չարենցի պոեմի գլխավոր խորհրդանշանը դարձյալ երկաթուղու կայարանն է, որ ոտքի ելած ուժերը պետք է գրավեն: Սարդարապատում ժողովրդական ցասումն իրոք հասել էր խելագարության աստիճանի, որովհետեւ հայությունը բոլորեքյան շրջապատված էր հակառակորդի ուժերով, փրկությունը միայն միաբանված ու ինքնամոռաց կռիվն էր: Նաեւ երգ կար կռվողների շուրթերին. հուշագիրները վկայում են, որ ժողովուրդը հայրենասիրական երգերով էր գնում կռվի, որովհետեւ երանություն էր հայրենիքի համար մեռնելը: Պոեմի 8-րդ մասում երգի ծայնը նմանեցվում է զանգի՝ «…զանգ էր կարծես ծայնը նրա»: Հիշենք՝ Սարդարապատի ճակատամարտի ժամանակ անընդհատ հնչում էին Մայր տաճարի ու մյուս եկեղեցիների զանգերը:

Այս մասին մանրամասն գրում են պատմագիրներն ու հուշագիրները: 1918-ի մայիսի կեսերին Արարատյան դաշտն ամեն կողմից շրջապատված էր թշնամիներով: Փախուստի ելք չկար: Միակ կարգախոսն էր՝ մահ կամ ազատություն: Ոտքի էր կանգնել Արարատյան դաշտի ամբողջ բնակչությունը, նաեւ կին ու երեխա: Ընդհանուր հրամանատարը զորավար Մովսես Սիլիկյանն էր, սպայակույտի պետը՝ գնդապետ Վեքիլյանը, զորքի թիվը հասնում էր 10000-ի: Այստեղ էին Երզնկայի, Մակուի, Վանի առաջին եւ երկրորդ, Ջեյթունի գնդերը, 4-րդ եւ 5-րդ գնդերը, պարտիզանական գունդը, սպայակույտի պարետի գումարտակը, հատուկ գունդը, Սմբատի, Դալի Ղազարի, Մուրադի խմբերը: Մայիսի 21-22-ին մասնակի ընդհարումներից հետո մայիսի 23-ին Սիլիկյանը տալիս է հարձակման հրաման: Նա ժողովրդին դիմում է սրտառուչ կոչով: Որպես մի նոր Ղեւոնդ Երեց զորքի մեջ հայրենասիրական ոգեւորիչ խոսք էր ասում Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը: «Ճակատի գինվորը չէր միայց – ամբողջ երկիրը մի մարդ, մի շունչ դարձած՝ կռվում էր թշնամու դեմ՝ ազատություն կամ մահ վճռական կամքով» (ՍՎ, ՀՀ, էջ 140):

Մայիսի 24-ին թուրքերը դիմում են փախուստի, որ շարունակվում է մինչեւ մայիսի 28-ը: Սիլիկյանը ժողովրդին կոչով դիմում է նաեւ Սարդարապատի վերջնական հաղթանակի օրը՝ մայիսի 29-ին: Այս կոչերն ուղեկցվում էին հաղթական կանչերով ու երգերով:

Այս ոգեշունչ տարերքը նաեւ «Ամբոխները խելագարված»-ի մեջ է, ուստի այն եւս հայոց պետականության վերականգնման օրհներգ է՝ ներծծված ընդհանուր հեղափոխական տարերքի բարձր ոգեւորությամբ:

Նույն ոգին առկայծում է նաեւ երեք ռադիոպոեմներում եւ «Խաղաղության ռադիո» պոեմում: Այս ռադիոն ամենեւին պատահական չէ: 1919 թ. «հոկտեմբերին արդեն վերջացել էր կառուցումը Երեւանի ուժեղ ռադիոկայանի, որ գործում էր մինչեւ Բասրա, Թաշքենդ ու Հաշտարխան» (ՍՎ, ՀՀ, էջ 353): Երեւանում կառուցված ռադիոկայանը ռադիոկայան է դառնում նա եւ Չարենցի պոեզիայի համար: Սրանք ամենեւին պատահական զուգադիպություններ չեն: Եվ իզուր չէր Չարենցն աշխարհով մեկ աղաղակում.

Ռադիոկայան է իմ հոգին հիմա
Ամբո՛ղջ աշխարհի ու մարդկանց հանդեպ.
Ու բա՛րձր է, բա՛րձր է կայանն իմ հոգու՝
Մասիսի նման բա՛րձր է ու հաստատ–
Հզո՛ր, ահարկո՛ւ (2, 100):

Ըստ թուրքական աղբյուրների՝ «Քյազիմ Կարաբեքիր փաշան իր բանակով կատարելապես դեպի համայնավարություն էր գնում»: Մինչեւ 1921թ. գործնական քայլեր էր անում կոմունիստ Մուստաֆա Սուբհին: «Այս փաստերը կասկած չեն թողնում, որ բոլշ եւ իկների եւ թուրքերի միջեւ գոյություն ուներ սերտ բարեկամություն եւ գործակցություն եւ պատահական չէ, որ «Թուրքերի հարձակումը Հայաստանի վրա անխառն հրճվանք առաջ բերեց բոլշեւիկների շարքերում» (ՍՎ, ՀՀ, էջ 449, 473):

Կառավարությունը «խիստ օրենքներ սահմանեց դասալիքների դեմ: «…»: Զինվորական նախարարի հրամանով Երեւանի եւ Կարսի հրապարակներում կանգնեցրեց կախաղաններ: «…» այն կարծիքն է տիրում, որ թյուրքերը, առանց որեւէ արգելքի հանդիպելու, հաղթեցին հայերին, որ հայկական բանակը ոչ մի դիմադրություն ցույց չտվեց: Այս կարծիքը արդյունք է բացարձակ տգիտության» (ՍՎ, ՀՀ, էջ 477):

Այդուամենայնիվ Կարսն ընկավ: «Կարսի անկումից հետո պատերազմի ընթացքը հայերի համար այլեւս դարձավ հուսահատական: Տեղի ունեցավ կառավարության փոփոխություն…» (ՍՎ, ՀՀ, էջ 497):

Վերջին զոհի գիտակցությունը չէր լքում ինչպես զինվորականին, քաղաքական գործիչին, այնպես եւ բանաստեղծին: Գնդապետ Մազմանյանի ինքնասպանությունը հուսահատության վերջին ճիչն էր թուրքից ու բոլշեւիկից խաբված զորքի առաջ: Խելագարության պահը էլ ինչպե՛ս պետք է լիներ: Վերջին զոհի նույն զգացողությունն էր համակել բոլոր նվիրյալներին: Ահա եւ քաղաքական գործիչի կերպարը: 1920թ. հոկտեմբերին՝ ծանր պարտությունից հետո, Օհանջանյանի կառավարությունը հրաժարական տվեց: Վարչապետի պաշտոնում նորից առաջարկվեց Քաջազնունին. «Քաջազնունին մեծ դժվարությամբ համաձայնեց ընդունել այդ պարտականությունը: «Պարոններ, ասում էր նա, ես գիտակցում եմ, թե ինչ է պահանջվում ինձանից: Դուք զոհ եք փնտրում ալեկոծության մատնված նավը փրկելու համար, եւ ուզում եք, որ ես լինեմ այդ զոհը: Եթե այդ է Հայրենիքի փրկության միջոցը եւ հայ ժողովրդի կամքը, ես խոնարհում եմ նրա առջեւ» (ՍՎ, ՀՀ, էջ 487): Ազգային համաձայնության կառավարություն կազմելու Քաջազնունու փորձերը ձախողվում են, նա ներկայացնում է հրաժարական եւ իր կողմից վարչապետի թեկնածու առաջադրում այդ ժամանակ գյուղատնտեսության եւ պետական գույքի նախարար Սիմոն Վրացյանին, ով եւ եղավ վերջին վարչապետը՝ կառավարելով 10 օր (23. 10. 1920 – 2. 11. 1920): Այնուհետեւ եւ . «Զոհ էր պետք եւ եթե այդ էր հայ ժողովրդի կամքը, որեւէ մեկը իրավունք չուներ հրաժարվելու: Վրացյանը ստիպված եղավ ընդունելու այդ տարապայմանորեն ծանր պարտականությունը» (ՍՎ, ՀՀ, էջ 488):

Ահա երկու ծայրակետեր. մի կողմից՝ ազգային զոհի գիտակցությունը, մյուս կողմից՝ դավաճանությունն ազգային գործին եւ դասալիքների համար նախատեսված կախաղանները, Չարենցի մեջ միավորվում եւ ծնունդ են տալիս «Մահվան տեսիլ» բանաստեղծությունը: Պատմական իրողությունները վերածվում են ոգու կանչի: Ահա այդ բանաստեղծությունն ամբողջությամբ, որից մեկ տող անգամ անհնար է կրճատել.

Որպես լքված թավջութակի ծգված մի լար՝
Դողում է սիրտս կարոտով մի ահարկու,
Կարոտներիս գագաթն է այն՝ վերջի՛ն քնար,–
Մի պիրկ պարան ու երկնուղեշ փայտեր երկու:

Որպես բախտիս մութ քամահրանքը, կամ որպես
Մի հին խոստում, որ անկատար, դրժած թողի–
Կախաղանի փայտերն ահա քաղաքի մեջ
Կանգնել են, սեգ, ու սպասում են կախվողի:
Կանգնել են, լուռ, իրար կքած, փայտեր երկու,
Ու մեջտեղում դողում է, մեղկ ու երերուն,
Մի գորշ պարան, ինչպես տխուր այս օրերում
Անբոց մորմոքը նայիրյան իմ ո՛րբ հոգու:
Իջել է շուրջը մի անհուր իրիկնաժամ,
Ու լռություն մի անստվեր, անդուռ, անդող,
Ինչպես մորմոքը օրերի, ինչպես դաժան
Մահվան թախիծը՝ իմ անլուր սիրտը բանտող:
Ու խանութները, գորշ կքած, ու այն մարդիկ,
Որ հավաքվել են փայտերի շուրջը հիմա,
Մահվան բեկուն այդ քնարին այդքան մոտիկ–
Ի՞նչ են ուզում՝ այդքան տխուր ու ակամա:
Եվ արդյոք ո՞վ է երազել այդքան դաժան–
Ու լուսավոր առավոտները իմ հոգու
Ո՞վ դարձրեց – մի անկրակ իրիկնաժամ,
Ու գորշ պարան, ու երկնուղեշ փայտե՛ր երկու:
Գուցե այդ ե՛ս եմ, որ սրտով իմ լուսնահար
Ո՛չ մի կրակ հեռուներից ձեզ չբերի,
Ու ցանկացա, որ չօրհներգե ո՛չ մի քնար
Լուսապսակ, պայծառ գալիքը Նայիրի…
Երթամ հիմա: Ու կարոտով անմխիթար,
Իմ երգիչի երազներով ու հրերով,
Անհրապույր իմ օրերի երգով մթար
Ու նայիրյան իմ երազի վերջին սիրով, –
Երթամ մարող ու մարմրող իրիկվա մեջ,
Որպես ուրու հալածական, որպես տեսիլ–
Տա՛մ պարանոցս կարոտին այն երկնուղեշ
Ու օրորվեմ՝ եղերական ու անբասիր…
Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան.
Եվ թող տեսնեն ի՛մ աչքերի մեջ կախվածի,
Իմ բո՛րբ երկիր, լուսապսակ քո ապագան:
Թող դուրս ընկած իմ աչքերի մեջ կախվածի,
Նոքա տեսնեն պայծառ օրերդ ապագա,–
Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ո՛չ մի ստվեր կախաղանին թող մոտ չգա (1, էջ 324-325):

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

Թվանկարչությունը՝ հանրությանը խաբելու ուղիղ ճանապարհ

էջ 1

Մարտի 7-ին էլ մարզպետը զեկուցեց վարչապետին, թե փաստացի հավաքվել է 1.685.7 մլն դրամ (սեփական եկամուտ), որը 2016-ի համեմատ ավելի է 21.2 տոկոսով: Դա նշանակում է, որ 2016-ին մարզի համայնքներում հավաքվել է 1.328.400 դրամ, որը 357.3 մլն դրամով զիջում է 2017-ի ցուցանիշին:

Առաջին հայացքից ամեն ինչ լավ է, գոհացնող է, սակայն …. Ո՛չ մարզպետը, ո՛չ Դավիթ Լոքյանը, ո՛չ Կարեն Կարապետյանը չեն ասում, թե ինչպես է ապահովվել այդ աճը, ինչ բազայի հիման վրա են գոյացել այդ թվերը:

Ու քանի դեռ չի տրվել պարզագույն այդ հարցերի պատասխանը՝ հայտարարված թվերն ընկալվում են իբրեւ անհավաստի, իբրեւ կեղծ տեղեկատվություն:

Հնարավո՞ր է, որ 2017 թվականին Սյունիքի մարզի ութ համայնքում սեփական եկամուտի այդքան աճ տեղի ունենար:

Իհարկե, հնարավոր է, բայց՝ տեսականորեն: Իսկ գործնականո՞ւմ…

Հողի հարկից դժվար թե ավելի գանձումներ լինեին, քանի որ գյուղական բնակչության շրջանում ավելացել են ընտանիքները, ովքեր չեն մշակում սեփական հողը եւ հողի հարկ չեն վճարում:

Գույքահարկի ոլորտում էլ դրական տեղաշարժեր չեն եղել (բացառությամբ մեքենաների թվաքանակի ավելացումը):

Եկամտահարկի ու շահութահարկի մասհանումները չեն աճել՝ հանրահայտ պատճառներով (աշխատավարձերի բարձրացում չի եղել, աղքատության ցուցանիշը չի նվազել):

Պետական ու տեղական տուրքերի մասով (համայնքներին առնչվող մասով) փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Ոչ հարկային եկամուտների մասով, ընդհակառակը, նահանջ է եղել. մարզպետի հանձնարարությամբ վարձակալությամբ տրված հարյուրավոր հեկտար հողերի վարձավճարը մի քանի անգամ գիտակցաբար նվազեցվել է, քանի որ իր ստրուկներին է տվել այդ հողերը:

Միգուցե նախորդ տարիներից գոյացած ապառքների հաշվի՞ն է աճ ապահովվել (հնարավո՞ր է այդքան աճ ապառքների հաշվին, մանավանդ որ մարզպետը 2017-ի սկզբին հայտարարեց, թե 2016-ի չորրորդ եռամսյակում ապառքները հիմնականում վերացվել են):

Իսկ գուցե ուրի՞շ բազա էլ կա սեփական եկամուտների համար, որին տեղյակ չէ հանրությունը:

Սյունիքի մարզպետարանի մեր աղբյուրները, միևչդեռ, միանգամայն այլ կերպ են մեկնաբանում սեփական եկամուտների աճը՝ համարելով այն պարզագույն թվանկարչություն եւ մանիպուլյացիա, հանրությանն այդ ոլորտում եւս խաբելու մոլուցք:

Ըստ այդ աղբյուրների՝ ընդամենը վահեհակոբյանական մի հնարք է բանեցվել. համայնքային ոչ առեւտրային կազմակերպությունները նախկինում եւ տարիներ շարունակ իրենց հաշվի մեջ էին ներառում մատուցվող ծառայություններից ստացվող գումարները (օրինակ՝ մանկապարտեզների ծնողական գումար, աղբահանության վճար եւ այլն), որոնք, բնականաբար, դուրս էին համայնքի բյուջեից եւ սեփական եկամուտ չէին կարող համարվել: 2017-ից նույն այդ գումարները նախ մտցվում են համայնքի բյուջե՝ իբրեւ սեփական եկամուտ, որից հետո ուղղվում համապատասխան ՀՈԱԿ: Այսինքն՝ բնակչությունից կամ տնտեսվարող սուբյեկտներից գանձվող գումարները չեն ավելացել, չի ընդլայնվել հարկման բազան, այլ նախկինում (նաեւ հիմա) ՀՈԱԿ-ների մատուցած ծառայությունների դիմաց վճարվող գումարները նախ ներառում են տեղական բյուջե՝ որպես սեփական եկամուտ, ապա ուղղում նույն այդ ՀՈԱԿ-ներին:

Սա եւ համայնքային բյուջեների եկամտային մասում սեփական եկամուտների «աճի» վահեհակոբյանական անատոմիան: Ահա, թե ինչպես են «ավելացել» սեփական եկամուտները Սյունիքի մարզում:

Եթե Վահե Հակոբյանը համաձայն չէ իր իսկ ենթակաների նման մեկնաբանությանը, ապա թող ինքը քաջություն ունենա եւ բացի փակագծերն ու ներկայացնի, թե ինչ աղբյուրների հաշվին է կամ ինչ բազայի հիման վրա է 2017-ին սեփական եկամուտների աճ գրանցվել մարզի համայնքներում:

***

Հիմա՝ հարցի մյուս կողմը:

Ընդունենք, որ մարզի ութ համայնքում 2017-ին իրոք հավաքվել է 1.685.7 մլն դրամ սեփական եկամուտ:

Ի՞նչ կապ ունեն դրա հետ Սյունիքի մարզպետն ու մարզպետարանը:

Բացեք, խնդրեմ, «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» ու էլի մի շարք օրենքներ եւ կտեսնեք, որ համայնքի բյուջեի կատարումը համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունն է (այդպես էլ գրված է):

Հետեւաբար՝ եթե մարզպետը տեղի-անտեղի անդրադառնում է համայնքներում սեփական եկամուտների հավաքման արդյունքներին՝ անթաքույց ակնարկ անելով իր պոզիտիվ դերակատարության մասին, ապա դա սովորական անբարոյականություն է: Կամ էլ՝ խոստովանություն, որ համայնքապետերը չեն կատարում իրենց գլխավոր պարտականություններից մեկը, ինչի համար էլ ինքն ինքնիրավչությամբ փոխարինում է համայնքի ղեկավարներին:

Իսկ եթե մարզպետն է իրականում կազմակերպում սեփական եկամուտների հավաքումը (թեեւ իր լիազորությունների մեջ չի մտնում), ապա գործ ունենք բոլորվին այլ իրողության հետ՝ մեր համայնքապետերն ինքնամեկուսացվել են իրենց կարեւոր այդ առաքելությունից:

***

Հարցն ուրիշ աստառ էլ ունի:

Եթե նույնիսկ մարզի ութ համայնքում տարվա ընթացքում հավաքվել է մոտ 1.6 մլրդ դրամ սեփական եկամուտ, ապա կարելի՞ է դա համարել համայնքի, մարզի առաջընթացի էական ցուցիչ:

Պատասխանը, ցավոք, բացասական է:

Սեփական եկամուտը համայնքների բյուջեում կազմում է ընդհանուր եկամուտի մոտ 30 տոկոսը (Քաջարան եւ Գորիայք համայնքները, հասկանալի պատճառով, փոքրինչ բացառություն են): Մնացած 70 տոկոսը (համայնքի ղեկավարի քնած կամ արթուն լինելուց անկախ) տրամադրում է պետությունը:

Անշուշտ, յուրաքանչյուր համայնքապետ ձգտում է ավելացնել սեփական եկամուտը, բայց դրա համար պետք է ունենալ համապատասխան բազա: Եվ սոցիալ-տնտեսական ներկա իրավիճակում, հարկային-բյուջետային քաղաքականության ներկայիս պայմաններում համայնքի բյուջեի եկամտային մասի պետական հատկացումների եւ սեփական եկամուտների 70-30 տոկոս հարաբերակցությունը չի կարող փոխվել 60-40-ի կամ նույնիսկ 65-35-ի:

Տա Աստված, որ մեր հաշվարկները ոչ իրատեսական լինեն:

Այդուհանդերձ՝ ի՞նչ ուղղությամբ են ծախսվում համայնքի բյուջետային միջոցները:

Մարզի գրեթե բոլոր համայնքներում տեղական բյուջեի 80-90 տոկոսն ուղղվում է աշխատավարձի վճարմանը:

Տեղական բյուջեի հաշվին համայնքային կարեւոր նշանակության որեւէ խնդրի լուծում, որքան էլ կամենա համայնքապետը, հնարավոր չէ:

Առկա միջոցները նույնիսկ հնարավորություն չեն տալիս կատարել համայնքային իշխանության՝ օրենքով նախատեսված պարտադիր լիազորությունները, որոնք իբր ենթակա են առաջնահերթ ու պարտադիր կատարման:

Կամավոր լիազորությունների կատարման մասին ստեղծված իրավիճակում նույնիսկ ավելորդ է խոսել:

Եվ նման պատկեր ունենալով, համայնքների բյուջեի սեփական եկամուտի հավաքման նման ցուցանիշով Սյունիքի մարզպետի մեկ տարվա գործունեությունը գնահատելու-փառաբանելու փորձը, ներող եղեք, սովորական անգիտություն է:

Իսկ եթե հանրապետության տարածքային կառավարման ու զարգացման նախարարն իսկապես ուզում էր գնահատել Սյունիքի մարզպետի 2017թ. գործունեությունը, ապա պետք է առնվազն վերցներ ՀՀ նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագիրը եւ դրա լույսի ներքո դիտարկեր Վահե Հակոբյանի գործունեությունը (առայժմ չունենք տարածքային կառավարման մասին օրենք եւ մարզպետների պարտականությունը կանոնակարգվում է նշված հրամանագրով):

Թե չէ այդ ամենն անլրջության տպավորություն է թողնում:

Դա չէ, սակայն, գլխավոր ցավը…

Ընդունենք մենք էլ հավատացինք Վահե Հակոբյանի հերթական շառլատանությանը: Բա երկրի վարչապե՞տը: Ինչպե՞ս է նա հանդուրժում, որ մի թերխաշ եւ կառավարությանը խաբի, եւ հանրությանը: Ինչպե՞ս է նա թույլ տալիս, որ կառավարության անդամ Դավիթ Լոքյանը ծոներգություն նվիրի մի մարզպետի, ով ընդամենն աճպարարության միջոցով թվեր է հորինել, ով գրեթե ամեն օր դաս է տալիս սյունեցիներին, թե ինչպես կարելի է ծաղրել հայրենի պետությանը:

Այդ ամենով հանդերձ՝ Դավիթ Լոքյանի սյունիքյան հռետորաբանությունը հասկանալ կարելի է: Նա Արտուր Աթայանից խլված «Վայբլի» չորս բաժնետերերից մեկն է, իսկ «Վայբլի» միակ արտադրանքի՝ կրի հիմնական սպառողը Քաջարանի կոմբինատն է: Սյունիքի մարզպետի հասցեին նրա արտահայտած որեւէ անզգույշ խոսքի, որեւէ անզգույշ քայլի հետեւանքով Քաջարանի կոմբինատը կիրը կբերի Պարսկաստանից, ինչպես վարվել է քանիցս: Այնպես որ՝ Դավիթ Լոքյանի համար կշեռքի մի նժարին Հայաստանի Հանրապետության շահն է, մյուս նժարին «Վայբլի» կիրը: Հո չի՞ բերելու կրի գործը ստորադասի պետական շահին…

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



Մեկուկես ժամ Բախի հետ

Կապանի արվեստի պետական քոլեջի փոխտնօրեն Աշոտ Խաչատրյանի նախաձեռնած երեկոներից «Գարուն» շարքի անդրանիկ համերգը նվիրված էր Յոհան Սեբաստիան Բախին: «Բախ» թարգմանաբար նշանակում է «առվակ», ուստի ինչպես գարունն է կյանք ու շունչ տալիս բնությանն ու ողջ աշխարհին, այնպես էլ առուն է կյանք ու սկիզբ տալիս գետերին, ծովերին ու օվկիանոսներին, Բախի ստեղծագործական ժառանգությունն էլ ինքնին մի զմայլելի աշխարհ է՝ լի կյանքով ու արարումով, լի պայքարով ու հավատով, լի գարնանային զարթոնքով:

1685 թվականի մարտի 31-ին գերմանական Այզենախ քաղաքում լույս աշխարհ եկավ մի մանուկ, ում անունը ոսկե տառերով պիտի գրվեր երաժշտական մշակույթի պատմության մեջ: Համաշխարհային երաժշտական արվեստի մյուս հանճարը՝ Բեթհովենը, դիպուկ է բնութագրել Բախի երաժշտական ժառանգությունը՝ գրելով. «Ոչ թե առվակ, այլ Ծով պիտի լիներ նրա անունը»: «Ողջ երկրայինն աստվածացրել է եւ աստվածայինը մարդկայնացրել»,- այսպես է Բախի մասին արտահայտվել իսպանացի թավջութակահար Պաբլո Կազալսը:

Համերգը տեղի ունեցավ մարտի 30-ին Կապանի Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցի դահլիճում եւ հնարավորություն ընձեռեց հանդիսականին վայելելու մեծանուն կոմպոզիտորի արվեստի պատճառած հաճույքը: Համերգային ծրագիրը սկսվեց մի մինոր «Տոկկատով», որ հնչեցրեց արվեստի քոլեջի դասախոս Լիաննա Ստեփանյանը: Արվեստի քոլեջի փոխտնօրեն Աշոտ Խաչատրյանը թավջութակով հանդիսականին մատուցեց կոմպոզիտորի երկու ստեղծագործություն՝ «Ադաջիոն» եւ «Արիոզոն»: Երեւանի պետական կոնսերվատորիայի շրջանավարտ, շվիահար Վիգեն Հովհաննիսյանը կատարեց «Մենուետ» եւ «Սկերցո» սի մինոր սյուիտից: Իսկ քոլեջի դասախոս, շեփորահար Սամվել Հայրապետյանը՝ «Պրելյուդ» թիվ 3 սոլ մինոր ստեղծագործությունը:

Համերգին մասնակցում էին ՀՀ ֆիլհարմոնիկ նվագախմբի ջութակահարներ Լիլիթ Անտոնյանը (կատարեց «Գրավե» թիվ 2 լյա մինոր մենանվագ սոնատից) եւ

Շնորհալի շվիահարի մենահամերգը

Կապանի մշակույթի պալատի փոքր դահլիճի բեմահարթակը մարտի 21-ին տրամադրվել էր Կապանի արվեստի պետական քոլեջի երկրորդ կուրսի ուսանող, միջազգային մրցույթի դափնեկիր Մհեր Ամիրջանյանին, ով հանդես եկավ մենահամերգով:

Դեռեւս հայրենի Դավիթբեկ գյուղում սովորելիս նրան հրապուրել են շվիի քաղցրալուր մեղեդիները, որ հնչեցնում էր համագյուղացի Ռոբերտ Միրզոյանը, ով հետագայում դարձավ նրա առաջին ուսուցիչը: Իսկ հետագայում հրապուրանքը եղավ լուրջ ձգտում. դարձավ Արամ Խաչատրյանի անվան N1 երաժշտական դպրոցի ժողովրդական նվագարանների շվիի բաժնի սան: Դպրոցում սովորելիս հաջողությունն արդեն ուղեկցում էր նրան: «Վերածնունդ» միջազգային փառատոնին էր մասնակցում եւ պարգեւներով վերադառնում հայրենի քաղաք: 2015-ին Սյունիքի մարզի երաժշտական եւ արվեստի դպրոցի սաների մրցույթում արժանացել է առաջին կարգի դիպլոմի: Երաժշտական դպրոցն ավարտելուց հետո ընդունվեց Կապանի արվեստի պետական քոլեջ, դարձյալ ժողնվագարանների բաժինը (դասախոս՝ Վաչիկ Համբարձումյան):

Ամենալուրջ հաջողությանը հասել է 2017-ին՝ Գյումրիում կայացած «Վերածնունդ» մրցույթ-փառատոնում արժանացել է դափնեկրի կոչման՝ երկրորդ կարգ:

Մենահամերգի երկացանկը բավականին ընդգրկուն էր. երաժիշտը հնչեցրեց Խաչատուր Ավետիսյանի «Զարթոնք», «Կոնցերտ», Արամ Խաչատրյանի «Օրոր», «Լեզգինկա», Գրիգոր Պահլավունու «Ով զարմանալի» տաղը, Սայաթ-Նովայի «Քանի վուր ջանիմ» եւ այլ ժողովրդական ու դասական ստեղծագործություններ (նվագակցում էին Լիաննա Ստեփանյանը եւ Սպարտակ Նուրիջանյանը):

Շվիահարը հնչեցրեց նաեւ Կապանի մշակութային կյանքի երախտավորներից մեկի՝ Նորա Դավթյանի «Լիրիկականը»: Արժանին մատուցվեց հանրապետությունում ճանաչված երաժիշտ ու երգահան Գառնիկ Խաչատրյանին, ում բարերար ազդեցությունը կա ու կլինի ժողովրդական նվագարաններ հնչեցնողների վրա, այդ թվում՝ Մհեր Ամիրջանյանի: Որպես երախտիքի տուրք ճանաչված մանկավարժի ու երաժշտի հիշատակին՝ Մհեր Ամիրջանյանը հնչեցրեց Գառնիկ Խաչատրյանի «Հայկական պարը»: Շվիահարն իր մենահամերգով իսկական տոն պարգեւեց կապանցի երաժշտասերներին:

Լուսանկարում՝ Վաչիկ Համբարձումյան եւ Մհեր Ամիրջանյան

Համերգի ավարտին Վաչիկ Համբարձումյանն իր սանին բնութագրեց որպես հեռանկար ունեցող երաժիշտ եւ համեստ ու կիրթ երիտասարդ: Մհեր Ամիրջանյանին բարին մաղթեցին Դավիթբեկի դպրոցում նրա դասղեկ Լարիսա Ալեքսանյանը եւ մարզպետարանի մշակույթի եւ սպորտի բաժնի պետ Սարգիս Դավթյանը՝ համոզմունք հայտնելով, որ հաջողությունները հաճախակի են «այցելելու» շնորհալի երաժշտին:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Հարգանքի տուրք մատուցեցին դեսպանատանը

Լուսանկարում՝ Հայրապետյան ամուսինները Հայաստանում Բելառուսի դեսպան Իգոր Նազարուկի հետ

Կապան քաղաքի բնակիչներ Դավիթ եւ Գրետա Հայրապետյանները Խատինի ողբերգության զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու համար, որի 75-րդ տարելիցը լրացավ վերջերս, Հայաստանում Բելառուսի դեսպանություն էին այցելել: Նրանք դեսպանատուն հասան անձնական օգտագործման «ԳԱՋ-21» մակնիշի ավտոմեքենայով, որի վրա Բելառուսի ազգային խորհրդանիշերն էին՝ դրոշն ու զինանշանը, նաեւ Խատինի ողբերգությունը հիշատակող մակագրություն:

Խատինը բելառուսական գյուղ է, որը 1943 թվականի մարտի 22-ին հիմնահատակ արվեց, իսկ բնակչությունը՝ մոտ 150 մարդ, մանուկից տարեց, հրո ճարակ դարձավ գերմանաֆաշիստական զավթիչների կողմից: Գյուղը ջնջվեց աշխարհագրական քարտեզի վրայից: Մի քանի հոգու հրաշքով հաջողվեց փրկվել այդ դժոխքից:

Դեսպանատանն ամուսինները հանդիպել են Հայաստանում Բելառուսի արտակարգ եւ լիազոր դեսպան Իգոր Նազարուկի եւ դեսպանի խորհրդական Վյաչեսլավ Լիսուխայի հետ, ներկայացրել իրենց նպատակը:

Դեսպանատանը դիվանագետների հետ կայացած զրույցի ընթացքում Հայրապետյան ամուսիններն իրենց հոգու հղումը բացատրեցին նրանով, որ անկեղծորեն ընդունում են բելոռուս ժողովրդի սխրանքը Մեծ հայրենականի տարիներին՝ սփոփանքի խոսքեր ասելով զոհված բելոռուսցիների հասցեին, ինչպես նաեւ մոմեր վառեցին եւ ծաղիկներ դրեցին Խատինի զոհերի հիշատակը հավերժացնող վահանակի մոտ:

Բելոռուս ժողովրդի հանդեպ ջերմ հուշերը Դավիթ Հայրապետյանի մեջ պահպանվել են խորհրդային բանակում ծառայելու օրերից, որն անցկացրել է Մինսկի մարզի Բորիսով քաղաքում: Նրա հոգում նաեւ տխուր հիշողություններ էին մնացել, երբ այցելել էր Խատինի հուշահամալիր:

Բորիսովը Կապանի քույր քաղաքն է, եւ Հայրապետյան ամուսինները դիվանագետներին հավաստիացրին, որ ամեն կերպ աջակցելու են քույր քաղաքների՝ Բորիսովի եւ Կապանի միջեւ եղբայրական կապերի ամրապնդմանը, ինչպես նաեւ երկու ժողովուրդների միջեւ բարեկամական հարաբերությունների զարգացմանը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Վահե Փարսադանյանը («Պրելյուդ» թիվ 3 սոլ մինոր): Մեծանուն կոմպոզիտորին նվիրված համերգային ծրագիրը եզրափակվեց այս երկու ջութակահարների զուգանվագով՝ կոնցերտ երկու ջութակի համար ռե մինոր ստեղծագործությամբ, որ ջերմությամբ ընդունեց հանդիսականը:

Երաժշտական կատարումների արանքում համերգավարը՝ երաժշտության տեսաբան Շուշան Գրիգորյանը, կենսագրական տվյալներ եւ հետաքրքրական դրվագներ ներկայացրեց Բախի կյանքից եւ գործունեությունից:

Վերջում մի փոքր շեղում կատարվեց օրվա թեմայից: Աշոտ Խաչատրյանը շնորհավորեց համերգին ներկա գեղեցիկ սեռի ներկայացուցիչներին կանանց միամսյակի առիթով, եւ հնչեց Կառլոս Գարդելի «Կնոջ բույրը» ստեղծագործությունը (Վահե Փարսադանյան, Լիլիթ Անտոնյան (ջութակ), Աշոտ Խաչատրյան (թավջութակ), նվագակցող՝ Լիաննա Ստեփանյան)): Նաեւ երախտագիտություն հայտնվեց համերգի մասնակից կատարողներին՝ (երաժիշտներ եւ նվագակցողներ)՝ հանդիսականին հրաշալի երեկո պարգեւելու համար, ինչպես նաեւ համերգի հովանավորներին եւ Ա.Խաչատրյանի անվան դպրոցի տնօրեն Լ.Վարդանյանին ու կրթօջախի աշխատակազմին՝ աջակցության համար: Ա.Խաչատրյանի անվան դպրոցի դասատու Ալլա Խաչատրյանը շնորհակալական խոսք ուղղեց արվեստի քոլեջի տնօրեն Վարդան Քոչարյանին եւ փոխտնօրեն Աշոտ Խաչատրյանին՝ համագործակցության համար:

- Տնտեսությունը, գիտությունը, մշակույթը կենտրոնացած են մայրաքաղաքում, մարզերը հանիրավի դուրս են մնացել տեսադաշտից, ուստի խրախուսելի է նման միջոցառումների անցկացումը Երեւանից դուրս: Սիրով ընդունեցի Աշոտ Խաչատրյանի առաջարկը մասնակցելու Կապանում այս միջոցառմանը, մանավանդ այստեղ առաջին անգամ եմ լինում: Երեկոն բարձր մակարդակով էր կազմակերպված, իսկ հանդիսականի վերաբերմունքը շատ ջերմ էր ու անմիջական, ինչը շատ կարեւոր է երաժիշտ կատարողի համար, - համերգի ավարտին «Սյունյաց երկրին» իր տպավորությունները ներկայացրեց ջութակահարուհի Լիլիթ Անտոնյանը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Ո՞ւր է սելիտրայի համար գյուղացիներից հավաքած գումարը

Մարզում գարնան գյուղատնտեսական աշխատանքների բուռն օրեր են:

Դաշտավարության ոլորտում իրականացվող առավել կարեւոր միջոցառումներից է ազոտական պարարտանյութով աշնանացան մշակաբույսերի սնուցումը:

Եվ այդ նպատակով Սյունիքում տարեկան օգտագործվում է մոտ երկու հազար տոննա ազոտական պարարտանյութ:

Ճշմարտությունը պահանջում է ասել, որ հողագործության համար կարեւոր այդ հարցը վերջին տասը տարում մարզում լուծվել է պետական մակարդակով, ավելի ստույգ՝ մարզպետարանի, գյուղնախարարության ակտիվ դերակատարությամբ, նաեւ շուկայականից ցածր գների ապահովմամբ:

Ընթացիկ տարում, սակայն, ազոտական պարարտանյութի ներկրման եւ գյուղական տնտեսություններին տրամադրելու հարցում ամեն ինչ չէ, որ կազմակերպվում է ըստ պատշաճի:

Նախ՝ ամիսներ առաջ մարզպետարանի նախաձեռնությամբ դրամահավաք կատարվեց՝ 34 տոկոս պարունակությամբ ազոտական պարարտանյութ ձեռք բերելու համար. խոսքն ավելի քան 100 մլն դրամի մասին է: Սկզբում մեկ պարկի գինը (մեկ պարկը 50 կգ է) հայտարարվեց վեց հազար դրամ, հետո երկու անգամ պահանջվեց լրացուցիչ գումար:

Գնի փոփոխությունը՝ մի կողմ, որովհետեւ նման դեպքերում սովորաբար պատճառ է բերվում պարսիկների կամ վրացիների քմահաճ վերաբերմունքը կամ բեռնափոխադրման սխեմայի փոփոխությունը (ավանդաբար պարարտանյութը ներկրվել է Պարսկաստանից կամ Վրաստանից):

Բայց… Անցել է երկու-երեք ամիս, իսկ պարարտանյութը չկա ու չկա:

Նման իրավիճակների համար նույնպես կա մշակված պատճառաբանություն՝ իբր պարսիկները կամ վրացիները քմահաճ են պայմանավորվածությունների հարցում եւս (այլ բան է, թե որքանո՞վ է այս դիտարկումը հիմնավոր ու հավաստի):

Տեսնելով, որ պարարտանյութը չկա, գյուղացին ուզում է հետ վերցնել տված գումարը, բայց չի կարողանում: Եվ այդպես՝ մեկ ամիս շարունակ…

Լավ, պարարտանյութը չկա, բա ո՞ւր է գյուղացիներից հավաքած փողը:

Ամեն ինչ, սակայն, դրանով չի ավարտվում. մարզպետարանի մեր աղբյուրները տեղեկացնում են, որ հավաքած գումարով մոտ 1400 տոննա պարարտանյութ է ներկրվել Սյունիք, սակայն դրանից հազար տոննան մարզպետը հատկացրել է մեկ այլ տարածքի (մարզից դուրս)՝ իր հովանավորներից մեկի խաթրն առնելու, լավ տղա խաղալու համար:

Շարունակությունն ավելի արտառոց է. հիմա էլ ազդող նյութի ավելի մեծ պարունակությամբ (46 տոկոս) ազոտական պարարտանյութ (կարբամիտ) է ներկրվում մարզ՝ ավելի բարձր գնով: Սակայն ամիսներ առաջ տված գումարով, պարզվում է, գյուղացին չի կարող օգտվել այդ պարարտանյութից: Դրանից օգտվելու համար, դեռ նախկին գումարը չստացած, նոր գումար պետք է հայթայթի:

Ստեղծված իրավիճակում բազմաթիվ ողջամիտ հարցեր են ծագում:

Մարզի հարավային գոտում արդեն իսկ անցնում է սնուցման ժամկետը (մի քանի օր հետո հնարավոր չի լինելու այդ նպատակով դաշտ մտնել), ո՞վ է պատասխան տալու բերքի հնարավոր կորստի համար:

Իսկապե՞ս մարզ է ներկրվել 1400 տոննա ազոտական պարարտանյութ:

Իսկապե՞ս դրանից հազար տոննան տեղափոխվել է մարզից դուրս:

Ո՞վ է պարարտանյութ ներկրող կազմակերպությունը. երկու անուն է շրջանառվում՝ Քաջարանի համայնքապետին պատկանող ինչ-որ ՍՊԸ եւ Սյունիքի զարգացման ու ներդրման հիմնադրամ. ո՞ր մեկն է դրանցից սելիտրա ներկրողը:

Արդյո՞ք մրցույթով են որոշվել ներկրողները (եթե մրցույթով է եղել, ապա ինչպե՞ս կարող ենք ծանոթանալ մրցույթի նյութերին):

Որտե՞ղ է գյուղացիներից հավաքած գումարը, արդյո՞ք դա այլ նպատակով շրջանառության մեջ է դրվել (ինչպես շատերն են մեզ հավատացնում), թե՞ հենց դրանով է ձեռք բերվել նշված 1400 տոննա պարարտանյութը:

Ե՞րբ եւ ո՞ւմից գյուղացիները կարող են ստանալ իրենց գումարը:

Ո՞վ պետք է պատասխան տա գյուղացիներին խաբելու, մարդկանց նորանոր խնդիրների մեջ ներքաշելու համար:

Սիսիանի տարածաշրջանի գյուղացիների բարձրացրած այդ հարցերի պատասխանն ակնկալում ենք ստանալ բացառապես Վահե Հակոբյան մարզպետից:

Պարարտանյութի շուրջ ծավալված ամոթալի այս խաղը, ցավոք, Սյունիքի հոշոտվող մարմնի վրա առաջացած վերքերն ավելի է խորացնում:

Երիցս վերահաստատվում է դեռեւս ամիսներ առաջ մեզանում ձեւավորված կարծիքն առ այն, որ ցանկացած գործ, որին շատ թե քիչ առնչություն է ունենում Վահե Հակոբյանը՝ անպայման ստի եւ խաբեության տարրեր է պարունակում, ինչը պետք է անընդհատ հիշել եւ նկատի ունենալ:

Բայց այդ ամենը հազարապատիկ անգամ ավելի անբարո է դառնում, երբ խաղի մեջ ենք ներքաշում բյուրավոր հոգսերի տակ կքած գյուղացուն:

Ինչո՞վ է մեղավոր սյունեցին, որ իր մարզպետն ամեն ինչ կորցրել է, բացի ախորժակից, բացի հարստանալու մոլուցքից եւ անվերջ խարդավանքներ հյուսելու մոլագարությունից:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Առջեւում կարեւոր մրցումներ են

Երեւանում մարտի 22-ից 24-ը կայացել է Հայաստանի քիք-բոքսինգի առաջնությունը: Սյունիքի մարզի քիք-բոքսինգի «Գարեգին Նժդեհ» ակումբի սաները (մարզիչ, ՀՀ վաստակավոր մարզիչ Արայիկ Սարգսյան) առաջնությունից հարուստ ավարով են վերադարձել՝ նվաճելով չորս ոսկե, երկու արծաթե, չորս բրոնզե մեդալ: Այս մրցմանն առաջին անգամ ակումբի կազմում մասնակցել է քաջարանցի չորս մարզիկ, որից երկուսը դարձավ արծաթե, երկուսը՝ բրոնզե մեդալակիր, ինչը վկայում է, որ մարզածեւը Քաջարանում

եւս տարածում է գտնում: Այս ամենով հանդերձ՝ ակումբի մարզիչ Արայիկ Սարգսյանը գոհ չէ իր սաների ելույթներից, ովքեր իրենց հնարավորություններից ցածր հանդես եկան, ինչը լուրջ խորհրդածությունների տեղիք է տալիս:

Ինչեւէ, մեր մարզիկներին առաջիկայում լուրջ փորձություններ են սպասվում: Այս առաջնության արդյունքներով ձեւավորվելու է ՀՀ հավաքականը, որ մայիսի 1-ից 6-ը մասնակցելու է Ուկրաինայի մայրաքաղաք Կիեւում կայանալիք Եվրոպայի աջանությանը, իսկ մայիսի 29-ից հունիսը 5-ը՝ Անապայում աշխարհի գավաթի խաղարկությանը:

Այս առաջնությանը մեր մարզիկների մասնակցությունը հովանավորել էր Կապանի լեռնահարստացման կոմբինատը (գլխավոր տնօրեն՝ Դմիտրի Ուշկով), ում ակումբի մարզիչներն ու սաները հայտնում են իրենց երախտագիտությունն ու գոհունակությունը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Ցուցահանդես եւ քննարկում Կապանի երկրագիտական թանգարանում

«Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամը եւ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության եւ ազգագրության ինստիտուտը Կապանի երկրագիտական թանգարանում նախաձեռնել եւ կազմակերպել էին ցուցահանդես՝ «Կոմունիզմն իր դարաշրջանում» խորագրով, որն ընդգրկում էր լուսանկարներ, ցուցապաստառներ, վավերագրեր, փաստաթղթեր: Հինգ վահանակ նվիրված էր Խորհրդային Հայաստանի քաղաքական պատմությանը, ահավասիկ՝ ««Խորհրդայնացում. «Հայաստանը բոլշեւիկյան մուրճի եւ թուրքական սալի միջեւ», «Արդիականացմանը գինը՝ բռնաճնշումները Հայաստանում», «Ջնհալ», որն է ազգային զարթոնք»: Նաեւ նյութեր կան, որոնք վերաբերում են Հայաստանի տնտեսական հաջողություններին եւ քայքայված տնտեսության վերականգնմանը եւ այլն:

Ցուցահանդեսի բացմանը, որ տեղի է ունեցել մարտի 26-ին, մասնակցում էին տարբեր տարիքի եւ զբաղմունքի մարդիկ, ովքեր ցուցադրանքին ծանոթանալուց հետո բարձրացան թանգարանի երկրորդ հարկ, որտեղ հնչեցին ցուցահանդեսի թեմային առնչվող զեկուցումներ:

Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն Գրիշա Սմբատյանի զեկուցումը վերաբերում էր Սյունիքում քաղաքական բռնություններին, հատկապես Կապանի տարածաշրջանին: Ըստ բանախոսի՝ բոլշեւիկյան կարմիր տեռորը Զանգեզուրում սկսվեց 1920 թվականին՝ հուլիսի վերջին եւ օգոստոսի սկզբին, երբ 11-րդ Կարմիր բանակը մտավ Գորիս եւ սկսվեցին արյունոտ բռնությունները. առաջին զոհերից եղան պառլամենտի պատգամավորներ Արշակ Շիրինյանը (Գորիսի Շինուհայր գյուղից) եւ Վահան Խորենին (Բռնակոթ): Թվերի եւ փաստերի լեզվով պատմաբանը ներկայացրեց բռնաճնշումների հետեւանքով խեղված մարդկանց ճակատագրերը, նաեւ այն, թե քանի փուլ են ունեցել քաղաքական հալածանքները, դրանց քանի հոգի են զոհ գնացել, մի խոսքով՝ Սյունիքում քաղաքական բռնությունների առանձնահատկություններին:

«Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի Հարավային Կովկասի տարածաշրջանային ծրագրերի ղեկավար Թոմաս Շրապելի դասախոսության խորագիրն էր «Մարդկությունը սպասում է այլընտրանքի. Հոկտեմբերյան հեղափոխության վարկածներն ու իրականությունը»: Նրա դասախոսության մեջ առավել ուշագրավ էր այն մեկնաբանությունը, թե ինչ դեր կարող էր խաղալ դիպվածը ժողովրդի ճակատագրում: Բանախոսը մանրամասնեց նաեւ այն գաղափարը, թե 1917թ. հոկտեմբերին կատարվածը հեղափոխությո՞ւն էր, թե՞ հեղաշրջում:

ՀՀ ԳԱԱ ինստիտուտի կիրառական ազգագրության խմբի ղեկավար, պատմական գիտությունների թեկնածու Հրանուշ Խառատյանը ներկայացրեց «Հայաստանի խորհրդայնացման առանձնահատկությունները եւ ԽՍՀՄ կազմավորումը» խորագրով զեկուցումը: Պատմաբանը մասնավորապես նշեց, որ Հայաստանում հեղափոխություն չի եղել, Հայաստանում նոյեմբերի 25-ին ծրագրավորվել եւ դեկտեմբերի 2-ին իրականացվել է կոշտ, բռնի հեղաշրջում: Ուշագրավ էր Հ.Խառատյանի այն վերլուծությունը, որ ԽՍՀՄ կազմավորում երեւույթ չի եղել, ինչպես դա գրվում էր դասագրքերում եւ նշվում կոնկրետ տարեթիվ եւ օր՝ 1922 թվականի դեկտեմբերի 30: Դա խորհրդային պրոպագանդայի հնարածն է:

Զեկուցումներից հետո ունկնդիրներն իրենց հարցերն ուղղեցին բանախոսներին: Վերջում քննարկումը վարող, հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Գայանե Շագոյանը հայտնեց, որ ցուցահանդեսը նախ՝ կազմակերպվել է Երեւանում, այնուհետեւ՝ ընտրվել հանրապետության մարզերից հյուսիսայինը՝ Շիրակը եւ հարավայինը՝ Սյունիքը:

Ցուցահանդեսին ներկայացված ցուցանմուշները մնալու են Կապանի երկրագիտական թանգարանում՝ որպես նվեր: Նշվեց, որ թանգարանի տնօրենը դեռեւս խորհրդային տարիներին հավաքել է այն ամենը բռնաճնշումների մասին, որ եղել են ոչ թե արխիվներում, այլ մարդկանց հիշողություններում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Ցուցադրանքում դիմանկարն էր

Հայաստանի ժամանակակից արվեստի թանգարանի Կապանի մասնաճյուղում մայրության եւ գեղեցկության տոնի նախօրեին՝ ապրիլի 6-ին, ցուցահանդես էր կազմակերպվել: Մասնաճյուղի տնօրեն Բորիկ Մինասյանը բացման խոսքում շնորհավորեց միջոցառման ներկա կանանց եւ աղջիկներին տոնի առթիվ, ներկայացրեց ցուցադրանքը, որ վերաբերում էր գեղանկարչության ժանրերից դիմանկարին: Բանախոսը, նախեւառաջ, տեղեկություններ հաղորդեց դիմանկարի ժանրի մասին՝ մասնավորապես նշելով, որ գեղանկարիչները դիմանկարի ժանրին անդրադարձել են բարձր Վերածննդի ժամանակաշրջանում Իտալիայում՝ երեք խոշոր գեղանկարիչներ՝ Լեոնարդո դա Վինչի, Միքելանջելո, Ռաֆայել Սանտի: Նախապես նկարել են քրիստոնեական թեմաներով, հետո դիմանկարի նյութ դարձավ մարդու գեղեցկությունը, նրա պլաստիկան, հուզական աշխարհը: Մեզանում դիմանկարի ժանրը զարգացավ 1830-ական թվականներից սկսած՝ Հովնաթանյանների կողմից, մասնավորապես, Հակոբ Հովնաթանյանը զարգացրեց դիմանկարի ժանրը, որ սկզբնավորվել էր դեռեւս իր պապի՝ Հովնաթան Հովնաթանյանի կողմից: Խորհրդային ժամանակաշրջանում այդ արվեստն ունեցավ դիմանկարի վարպետների մի համաստեղություն: Վերարտադրելով մարդուն՝ տվյալ անձնավորության առանձնահատկությունները, նկարիչը, միաժամանակ, պատկերվող դեմքի մեջ բացահայտում է նրա ներաշխարհը, անհատականությունը, ազգային ու հասարակական պատկանելությունը:

Մասնաճյուղի երկու հարկաբաժինը հատկացված էր դիմանկարին, ներկայացված էին ՀՀ վաստակավոր նկարիչ, գծանկարի մեծ վարպետ Ռուդոլֆ Խաչատրյանի, ՀՀ ժողովրդական նկարիչ, ժամանակին ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի թղթակից-անդամ Հովհաննես Զարդարյանի, Բորիս Հակոբյանի, Վահրամ Խաչիկյանի, Պետրոս Մալայանի, Գոհար Իսայանի, Հարություն Սամուելյանի, Վաղարշակ Արամյանի, այլ գեղանկարիչների ստեղծած դիմանկարները: «Բազմազանության» համար ցուցադրանքում տեղ էին գտել նաեւ որոշ կոմպոզիցիոն աշխատանքներ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Պետական օժանդակության ծրագրերով հանրապետություն է ներկրվել գարնանացան գարու հերթական խմբաքանակը

Ռուսաստանի Դաշնությունից հանրապետություն է ներկրվել գարնանացան գարու սերմացուի հերթական խմբաքանակը:

ՀՀ գյուղատնտեսությանն նախարարի տեղակալ Աշոտ Հարությունյանը նշել է, որ այս տարի մարզերից գարնանացան գարու պահանջարկը եղել է 2226 տոննա, որից 1200 տոննան արդեն բաշխվել է հողօգտագործողներին՝ փոխնախարարը հավելել է, որ հիմնականում սերմերը Հայաստան են ներկրվում Ռոստովի մարզի Զերնոգրադ քաղաքի «Դոնսկոյ ագրոխիմ» ընկերությունից եւ Ստավրոպոլի երկրամասի «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերությունից:

Ընդգծելով, որ դեռեւս մոտ 20 օր առաջ հանրապետությունում կարելի է կատարել ինտենսիվ գարնանացանի աշխատանքներ եւ այդ ժամանակահատվածում նախատեսվում է բաշխել սերմացուի մնացած խմբաքանակը՝ նախարարի տեղակալը հորդորել է հողօգտագործողներին եւ համայնքների ղեկավարներին սեղմ ժամկետում ներկայացնել իրենց պահանջարկի վերաբերյալ հայտերը եւ ստանալ անհրաժեշտ սերմացուները:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին
30 մարտի 2018թ.

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

® Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայական՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR-ԿՈԴ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 11.04.2018թ.: